



ԿՈՄԻՄԱՐ
ԻՎԱՆ
ՊԱԺԱՐԻՇԿԻ

35.54
Բ-74

ՊԵՏՀՐԱՏ 1939

E - MAR 2010

ԵՐԱԾՈՅԱ

3559
h-74

այ

ԿՈՄԻՍԱՐ

ԻՎԱՆ ԳՈՖԱՐՍՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿ ԶՈՒԹՑՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

40.610

29 APR 2013

Ե. Խամկով. Շետքիաց Խվան Պահարակից բրոշյուրում պատ
չըգում և Խորհրդային Միության Հերոս Խասան լճի ուայոնի Կորֆների
մասնակից կոմիսար Իվան Ալեքսեյեվիչ Պոժարսկու կյանքի, զործու-
նելության և փառապանծ մահվան մասին:



286
40

Э. ИСАКОВ
Комиссар
Иван Пожарский

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.



յովթվասիրսի վիասիու Հվատի

ՔՍԱՆՎԵՑԻՑ ՄԵԿԸ

Յեղեղների միջից աղմուկով դուրս թռավ մեկ ժաման։ Մի ինչ-վոր տեղ մի ճյուղ ճթաթաց և կրկին ամեն ինչ լոեց։ Լճից խոնավություն փուլեց։

Սովորական գիշեր սահմանում։ Արթուր է ժամապահի աջը։ Նա լարված կերպով նայում է դեպի «ոտար» հողը, լսում է խորհրդային յերկրի սահմանի այն կողմից ծնունդ առնող ձայները. չե՞ վոր ամեն ինչ կարելի յե սպասել «անհանդիսա և, ինչ մեղքս ծածկեմ, անխելք հարեանից»։

Ահա մի ինչ-վոր տեղ չունը հաջեց ու սսկվեց։ Խուլ կերպով մի չոգեքարչ խրխուաց, վագոնների բուֆերները զրնդացին, խուլ ձայներ լսվեցին...

Ճապոնացիներն ամբողջ գիշերն ինչ-վոր բան են կրում սահմանի մոտ, բեռնաթափում են...

Խոկ խորհրդային սահմանի ուղեկալում ընթանում է սովորական կրանքը։ Առավոտը խոհարարը միսը պղինձը դցեց և անհանդիսա կերպով փորձում է սուպը—աղի չե՞ արդյոք։

Լեյտենանտ Խրիստովուրովը մարտիկների հետ հրաձը-դության հերթական պարապմունքն անցկացրեց։ Վարժու-թյունը «լավի» կատարելով, հենց այստեղ ել խոստանում են մյուս անդամ «գերազանցի» կատարել և այդ հաս-տատում են սոցիալիստական պարտավորություններով։

Սահմանապահ Պողոսյելը մյուսների հետ միասին հրա-



շանն ե մաքրում։ Դեպի արևը բարձրացնելով կոթը, նա փայլուն հրացանախողը «դեպի լույսն» ե դարձնում, տեղն ե դնում փակաղակը, մաքրիչի վրայից վերցնում ե բալորովին մաքուր փալասը և ճշտապահորեն պնդացնում ե յուղամանի ծածկիչը։ Պողեյելը չգիտեր, վոր ինքն այդ ծածկիչն այլևս յերբեք չպետք ե բանա...

1938 թվի հուլիսի 29-ին Բեղմյաննայա բարձրության վրա մեկ կրակոց լսվեց։ Հետո յերկրորդը, յերրորդը։ Մի տեղ ել դնդացրի ջղային դռնչուն հնչեց։ Ճապոնացիներն անցել եյին խորհրդային սահմանը։

Կարմիր բանակային Պողեյելը և նրա լնկերներ կուլշինովը և կոսորոկովը, վորոնք այդ որը դիտակալներ եյին, առաջինը նկատեցին ճապոնական զինվորներին, վորոնք գետնի յերեսին սողում եյին՝ կարծես խլեզներ լինելին։

Կոիլն անհավասար եր։ Խորհրդային տասնմեկ սահմանապահների դեմ ճապոնացիների ամբողջ ջոկատ եր դուրս յեկել։ Բայց և այնպես՝ մի բուռը սահմանապահներ դլովին ջարդեցին նրան։

Խասան լճի մոտի այս առաջին կովում քաջերի մահով ընկան լեյտենանոտ Մախալինը և կարմիր բանակայիններ Պողեյելը, Յեմցելը, Շմելյովը, Սավինիխը...

Ճապոնացիները շարունակ նորանոր զորամասեր եյին մտցնում կովի մեջ։ Նրանց դրաված Զառողերնայա և Բեղմյաննայա բարձրությունները սաստիկ ամրացված եյին, ճապոնացիները նրանց անառիկ եյին համարում։ Բայց հզոր, անհաղթելի կարմիր բանակը ճապոնական լկտի հափշտակիչներին այնպիսի ջախջախիչ հարված հասցեց, վոր նրանք հարկադրված յեղան մաքրել մեր աերիտորիան և շտապ կերպով խնդրել խորհրդային կառավարությունից հաշտություն կնքելու իրենց հետ։

6

«Ուել այժմ ստույգ կերպով հայտնի յե, վոր Զառողերնայա (Զանկոֆին) սարի գրավման հարցը և, նշանակում ե, Ասսան լճի շրջանում տեղի ունեցած իրադարձությունների ամբողջ հարցը վճռվել ե փաստորեն վոչ թե Տոկիոյում, այլ ինչ-վոր մի այլ տեղ՝ Յեվրոպայում, իսկ ավելի շուտ՝ Բեռլինում։ Ճապոնական սազմամոլները հավանաբար ուզում եյին պաշտպանել իրենց Փաշիստական բարեկամներին Գերմանիայում և, առանց մտածելու, ընկան իրենց ինչ-վոր մանր գործակալների թակարդը»¹⁾ (Մոլոտով)։

Պրովակացիան չհաջողվեց։ Ճապոնական Փաշիստները մի ավելորդ անգամ ջարդվեցին։ Կարմիր բանակը չափ ու սահմանից անցած զավթողներին զլիսովին ջարդեց։

«Ճապոնացիների հարձակումը Խորհրդային Պրիմորյեյում, մեզ առիթ տվեց ցուցադրելու վոչ միայն ճապոնական իմպերիալիստներին, այլև ամբողջ աշխարհին, վոր Խորհրդային Միությունը մինչև վերջը հավատարիմ ե իր հայտարարություններին, իր արտաքին քաղաքականությանը, և վոր նրա հետ կատակ անել վտանգավոր ե... ԽՍՀՄ անդրդվելի հավատարմությունն իր խաղաղ արտաքին քաղաքականությանը և նրա պատրաստակամությունը՝ մինչև վերջը պաշտպանելու խորհրդային սահմաններին ամեն աեսակ հարձակումներից, — ահա Խասանի մոտ տեղի ունեցած իրադարձությունների արդյունքը, վորը միջադարյային մեծ նշանակություն ունի»²⁾ (Մոլոտով)։

1) Զեկուցում Մոսկվայի խորհրդի հանդիսավոր նիստում 1938 թ. նոյեմբերի 8-ին.

2) Նույն տեղը

(Խմբագրություն)։

Խասան լծի սովորաբար հանդարտ ջրերը տարածվում
են խորհրդային սահմանի մոտ չորս կիլոմետրի չափ։
Կարծես հենց ուղիղ ջրի միջից սովորաներ ու բարձրու-
թյուններ են ցցվում՝ ծածկված ցածրիկ կաղնուտով։

Սա հարուստ, պտղավետ, լայնարձակ մի յերկիր է։
Լավ է աճում բրինձը։ Շատ ձուկ, վորսի թուչուններ կան։
Խրտնեցնես—թռչունների ամբողջ յերամ յերկինք կրարձ-
րանա։ Պոսյետի շրջանում ապրելը լավ է։ Լավ ու հարուստ
են ապրում Յանչիխեյի և Ֆատաշիի կոլտնտեսականները,
վորոնց տներն ընկած են Խասանին մոտիկ։

Այժմ խաղաղ է լծի մոտ։ Ջրից մառախուզ է տարած-
վում, ձուկը խաղում է, բաղերի յերամներն են գանչալ
լուղում։ Իսկ յերբ քամին ցրում է մառախուզը, հեռվում
կարմիր դրոշակն է յերկում, վոր հաղարտ կերպով ծածան-
վում է Զառղերնայա սովորայի վրա, հիշեցնելով մոտիկ
անցյալի տաք կոփիխները, այստեղ ընկերների հերո-
սական սխրագործությունները, վորոնց վերջին խոսքերն
ամենից թանդարին և հարազատ մարդու։ Ստալինի մասին
ելին...

Մարտական խնդիրների որինակելի կատարման և Խա-
սան լծի շրջանը պաշտպանելիս հանդես բերած հերոսու-
թյան համար Խորհրդային Միության Գերազույն Խորհրդի
Նախագահությունը շքանշաններով ու պատվոնշաններով
պարզեատրեց մի քանի հաղար մարտիկների, հրամանա-
տարների, քաղաշխատողների և Խորհրդային Միության
Հերոսի կոչում չնորհեց հանձնելով լենինի շքանշան հայ-
րենիքի պաշտպաններից քանավեց հոգու, վորոնք քաջերի
մեջ ամենաքաջերն են։

Վերջինների թվումն և նաև հերոս զինկոմ ավագ քաղ-
դեկ Պոժարսկի իվան Ալեքսեյիվիչը։

...1919 թվի նոյեմբերին ընկեր Ստալինը Հարավային
ռազմաճակատի կոմիսարների համար հրահանդ մշակելով,
դրում եր։

«Յերբ ամբողջ գումարը կամ նրա նշանակալի մասը սազ-
մական գործողություններ ե կատարում, գնդի կոմիսարը,
կապն շտաբի հետ չկորցնելով պարտավոր և հետեւել ուղղ-
մական դոփողությունների ընթացքին, մանավանդ կապի
աշխատանքը դիտելով։ Առանձնապես վտանգավոր տեղե-
րում և կովի ավելի լուրջ մոմենտներին գնդի կոմիսարն
իր ներկայությամբ ու անձնական արիության որինակով
պետք է պահպանի զորամասերի մարտական տրամադրու-
թյունը և նպաստի հրամանների ճիշտ և կանոնավոր իրա-
դումները, հարկավոր դեպքում— նաև զորամասը գրոհի
տանելով։»

Իվան Պոժարսկին ճշտությամբ եր կատարում կոմի-
սարներին ուղղված ստալինյան նակազը։ Յերեք անգամ
վիրավորված, նա իր զորամասը գրոհի յեր տանում՝ գրոհով
վերցնելու ձարպնական ամրությունները։ մնում եր գուրս
քշել թշնամուն Պուլեմյուտնայայի վերջին գիրքերից։

Յերիտասարդ կոմիսարը պարզեատրված է բարձր կո-
չումով, սակայն Միխայիլ Իվանովիչ Կալենինը Կրեմլում
նրան չի հանձնի չնորհված շքանշանը, չի սեղմի նրա քաջ
ձեռքը։

Կոմիսար Իվան Պոժարսկին նշված է բարձրագույն կո-
չումով— Խորհրդային Միության Հերոսի կոչումով—մա-
հից հետո։ Գնդակը նքան մահախոցեց այն մոմենտին, յերբ
նա նոնակը ձեռքին՝ իր զորամասի զլուխն անցած անհա-
պաշ եր սլանում դեպի կատաղի կերպով դիմադրող թըշ-
նամին։

ԿՅԱՆՔ ՄՏՆԵԼԸ

Իվան Պոժարսկին ծնվել է Արդատովի քաղաքում 1905 թվին: Այն խրճիթը, վորտեզ ապրում եր կարիքից յերբեք դուրս չեկող Պոժարսկիների ընտանիքը, հնությունից սևացած եր, փտած տանիքը մամուռի կտորներով եր ծածկված, անմիջիթար կերպով նայում եր աշխարհին իր ծուռտիկ, պստիկ պատուհաններով, վորոնց միջից Վանյան փոքրիկ, տիսուր քաղաքն եր տեսնում: Արդատովում ֆաբրիկաներ չկային: Մարդիկ զբաղվում եյին կաշի մշակելով, կոշիկներ ու թաթմաններ կարելով:

Ապագա կոմիսարը զնուում, դիտում եր կյանքը: Նա տեսնում եր, վոր այն ժամանակ, յերբ կարիքը ճնշում եր վորանց, ուսանում և ուրախ ու անհոգ ապրում եյին ուրիշները:

Վանյայի հայրը, ինչպես նաև քաղաքի չափահաս բնակչության մեծամասնությունը արտավայր զբաղմունքի յեր գնում դեպի Վոլգա՝ Սիբիր, Սիմբիրսկ (այժմ Ուլյանովսկ) և ուրիշ տեղեր:

Վանյան հորն ոգնելու համար դեռ փոքր եր: Մի կտոր հաց վերցնելով, նա հաճախ վազում եր դեպի Ալատիր գետը, ամբողջ որերով նստում եր այնտեղ ու լսում եր թոշունների յերգը, ջրի քչքչոցը:

Բայց այս ուրախ որերը չուտ անցան: Հոր աշխատանքը քանի զնում քչանում եր: Ընտանիքը քաղցած եր մնում:

Դեռ տասը տարեկան յերեխա, վորից դաժան կյանքը կարծես իլել եր ինչ վոր յերեխայական եր, ընկծված այն բանից, վոր հարկադրված եր առաջին յերկու տարի միայն սովորելուց հետո դպրոցը թողնել, Վանյան գնաց փող աշ-

խառնելու: Նա քաղաքային բարակների շինարարության մեջ հող փորող դարձավ և յերկու տարի չարունակ չափահասների հետ հող եր փորում:

Ծանր, ուժից վեր աշխատանքից ցավում եր յերեխայի մեջքը, մղկտում ելին զեռ չամքացած ձեռքեզզ: Այստեղ վանյան չափահասներից լսեց ոուս-գերմանական պատերազմի, նրա անմիտ զոհերի մասին: Տեսնում եր նա, թե ինչպես ապրելն ամենքի համար դնալով վատանում եր և վատանում բացի կապալառույից և արդատովյան առետրականներից:

Այդ քաղաքին հասնող Փետրվարյան հեղափոխությունը Պոժարսկիների կյանքում վոչինչ չփոխեց: Իվանն ամբողջ տարին հոր հետ միասին աշխատում եր փայտամթերման գործում և որական 60–80 կոպեկ եր բերում:

Խիս ու թավ անտառն իր դարավոր լոությամբ շշմերեց տասներկու տարեկան տղայի յերեակայությունը:

— Անտառապահ: Էմ զառնալու, — հանդսուի հազվագյուտ ըոպեներին ասում եր նա հորը:

Նա չեր ել յերեակայում, թե իր կյանքն այլ կերպ ե դասավորվելու: Իվանից անտառապահ դուրս չեկավ, բայց կյանքն անտառում սովորեցրեց նրան արագ կերպով կողմնորոշվել, գտնել հաղիվ նշմարելի շավիղները, արեգակով իմանալ ժամանակը, նշաններով վորոշել յեղանակը, — այս ամենը նրան շատ պետք յեկան հետագայում, խորհրդացին սահմանները պահպանելիս . . .

Փայտամթերումներից վերադառնալով, Իվանը վորպես թղթատար մտավ տեղական թերթի խմբագրատունը, այսեղից այն կոչկակարային արհեստանոցներից մեկն ընկավ, վորոնցով վազուց հոչակված եր Արդատովը:

Իվան Պոժարսկին տասնչինդ տարեկան դարձավ։ Նա յերեխային վոչ-հատուկ կերպով չափահաս էր, պահանջկոտ վոչ միայն դեպի ինքը, այլև դեպի ուրիշները։ Այսպես՝ աննկատելի կերպով յերեխայությանը փոխարինելու յեկավ պատանեկությունը — մարդկային կյանքի հիմնալի ժամանակը։

Իվան Պոժարսկու, բանվոր-պատանու կյանքի գարունը դուզագիտեց յերկրի ամենաղժվար ժամանակին — ուղմաճականներ, սով, Խորհուրդների հանրապետությունն աշխատում ե հետ մղելով ազատվել ամեն կողմից իրեն ներող թշնամուց։

«Խորհրդային Ռուսաստանում գրությունն այդ ժամանակաշրջանում ծանր էր։ Զեր բավականանում հացը։ Զեր բավականանում միսը։ Սովը տանջում էր բանվորներն։ Մոսկվայի և Պետրոգրադի ամեն մի բանվորին յերկու որվա համար տրվում էր մեկութերորդական գրվանքա հաց։ Լինում էյին որեր, յերբ բոլորովին հաց չեր տրվում։ Գործարանները չեյին աշխատում, կամ համարյա չեյին աշխատում։ Հումքը, վառելիքը չեր բավականանում։ Բայց բանվոր գասակարգը չեր վհատում։ Զեր վհատում բոլչեկների կուսակցությունը։ Այդ ժամանակաշրջանի անսանելի դժվարությունները և դրանց դեմ մղվող կատաղի պայքարը ցույց տվին, թե ինչպիսի անսպառ յեռանդ ե թաղնորդած բանվոր դասակարգի մեջ և վորքան մեծ, անչափ և բոլչեկներան կուսակցության հեղինակության ուժը» (Համ. Կ(ր) Կ պատմության համառոտ դասընթաց)¹⁾։

Քաղաքացիական կոիվը յերկիրը ուղղմական ճամբարի վերածեց։ Յեվ ապագա կոմիսարը հերոսական կարմիր Բա-

նակի մարտիկների համար հավաշոակությամբ եր կոչեկ-նակի կարում։ Մի՞թե սա պատվավոր խնդիր չեր։ Պոժարսկին արհեստանոցի ամենասկտիվ բանվորն ե դասնում, նա սկին արհեստանոցի ամենասկտիվ բանվորն ե դասնում։ Հասկանում ե, թե կոչեկներն ուժ համար են կարվում։ Իվան Պոժարսկին տասնվեց տարեկան հասակում կոմսովի մեջ ե մտնում։ Նա հետաքրքրվում ե քաղաքական հարցերով, շատ ե կարում, իր ամբողջ պատանեկան ավյունը սովորելուն, կոմսոմոլիստական աշխատանկան ավյունը սովորելուն, կոմսոմոլի կոմիտեն 1922 քին, արհեստանոցին ե տալիս։ Կոմսոմոլի կոմիտեն 1922 թվին Պոժարսկուն մոբիլիզացիայի յե յենթարկում՝ պաթվին Պոժարսկուն մոբիլիզացիայի իր համար կումական ընդունում աշխատելու։ Տասնյոթ տարեկան ընդունում անկատում աշխատելու։ Տասնյոթ տարեկան կաշեկործ վարպետը պարենչոկատի մարտիկ ե դաս-նում։ Այժմյան ջահելներն այն ժամանակի խսկական պայ-մանների մասին աղոտ գաղափար ունեն։ Այն ծանր տարի-ներին պարենավորման բանակը կուլակներից հաց եր վերցնում կարմիր Բանակի, բանվորների և զյուղական չքաղաքության համար։ Պարենչոկաններն եյին ուղարկում ամենապնդիվ, կարդապահ և ստուգված մարդիկ։

Պարենավորման ջոկատներ կազմակերպելու համար ուղարկած իր հեռագրում Վաղեմիլիր իլլիչ Լենինը նշում եր, վոր պարենավորման բանակի համար աշխատողների ընտրությունն այն հաշվով պետք ե կատարվի, վոր հետո վոչ մի բիծ չերեա այն մարդկանց անվան վրա, վորոնք պետք ե գյուղը ղնան՝ պայքարելու մի բուռն զիշտիչ-պետք ե գյուղը ղնան՝ պայքարելու մարդկանց անվան վրա, վորոնք կուլակների գեմ՝ բազմամիլիոն աշխատավորական մասսան սովոր փրկելու համար։

Այսպիսի «անբիծ» մարդկանցից մեկն ել յերիտասարդ կաշեղործ իվան Պոժարսկին եր։ Ամբողջ տարին նա աշխատում ե Արդատովյան գավառի հացի հակատում։ Յեվ

1) Համ. Հրատ., հջ 308։

Էլուցեւ հենց այստեղից ել սկսվում եւ բյուրեղապումը բուշ
շերի Պոժարսկու, այն Պոժարսկու, վորին այժմ ճանաչում
և ամբողջ կարմիր Բանակը, ամբողջ յերկիրը:

Պարենջոկատի աշխատանքը Պոժարսկուն շատ բան
սովորեցրեց: Դիտելով սարայները, բանալով հորերը, վոր-
տեղ կուլակներն իրենց հացն եյին փտեցնում, նա ճանա-
չում եր թշնամուն, հասկանում եր նրա խորամանկությու-
նը, դազանային չարությունը, հնարքները: Այս աշխատան-
քում պատանին առաջին անդամ դեմ հանդիման յեկավ մա-
ճի հետ, վոր նրան սպասում եր համարյա յուրաքանչյուր
կուլակի բակում: Նա շատ անդամ ե տեսել անկյունից իր
վրա ուղիած կուլակային հրացանափողը:

Կյանքը վերականգնում եր: Պարենջոկատները տպա-
կազմվեցին: Պոժարսկուն նոր ճակատ են դցում: — Նա դառ-
նում ե պրոֆ-տեխնիկորոցի կոմսոմոլի րջի քարտուղարը:

1925 թվին իվան Պոժարսկին ձևակորում ե իր անխզելի
կապը Լենինի-Ստալինի կուսակցության հետ: Նրան ընդու-
նում են Համկ(բ)կ թեկնածու, հետո ել անդամ: Պոժար-
սկուն սիրում, նրան վստահում են: Նա վոլոստային կո-
միտեյի կոմսոմոլի քարտուղար ե, Համկ(բ)կ վոլոստային
կոմիտեյի անդամ ե, կոմսոմոլի զավառային կոմիտեյի
անդամ ե, վեստուգիչ հանձնաժողովի նախադահ ե, քաղ-
խորհրդի անդամ ե...

Յեզս մեկ նշանակալից թվական յերիտասարդ Պոժար-
սկու կյանքում, վորն ընդմիշտ վորոշեց նրա հետաղա ճա-
կատագիրը:

Կուչ գալով ավելի շատ անսովոր դրությունից, քան
ցրտից, զգալի կերպով վնասելով մկանները, Պոժարսկին
կանգնած ե թժշկի առաջ:

— Այսպէս, լով, շուռ յեկեք մի չնչեք հազարեք, —
ինչորում ե թժիշկը:

Պոժարսկին յերեխայական հնազանդությամբ կատա-
րում ե բոլոր անհրաժեշտ պլրոցեղուրաները: Յեվ, վերջա-
պես վաղուց սպասածը.

— Դե յերիտասարդ, չնորհավորում եմ, պիտանի յես
ինչի ասես:

— Իսկ դուք ո՞ւր եք ուզում, Պոժարսկի, — հարցնում
ե նրան զորակոչային հանձնաժողովի նախագահը:

— Յես — Պոժարսկին մեկ վայրկյան մտքի մեջ ե ընկ-
նում, իսկ հետո նայելով ժպտացող Ստալինի պատկերին,
իր վաղեմի յերազն ե արտահայտում, — իհարկե ավիա-
ցիա... ասենք՝ վորտեղ դուք հարկավոր կհամարեք:

Արանում ամբողջ Պոժարսկին եր:

Նրան նշանակեցին կաղանի հրաձիգ դիվիզիայի Պեն-
տենյան գնդի դպրոցի կուրսանտ:

Բոլշևիկի կյանքում նոր չրջան սկսվեց:

Այդ 1928 թվի նոյեմբերի 1-ին եր:

ԿՈՄԻՍԱՐՆ ԱՇԽԱՏԵԼԻՄ

Յերբեմն այնպես ե լինում, վոր դատարկ բանի հա-
մար սկսված վեճը միծանում ե չղիտես վորտեղից վերց-
րած կասկածներով ու ծանր մեզադրանքներով: Յեվ թվում
ե, թե վոչինչ չի կարող հաշտությունը վերականգնել: Հա-
րաբերությունները փակուղու մեջ են մտնում:

Տվյալ դեպքում հրամանատար Շոկ ընտանիքում յերկ-

պառակության՝ պատճառը՝ յեղավ՝ այն յերբ, հայտնի չեմ թե վորտեղից, մեկ հին ծանոթ կնոջից նամակ ստացվեց։ Եւ յերեք յերեխա ուներ։ Ազգբուժ դա լավ, ամուր ընտանիք եր։ Այժմ ապահարզանի հարց բարձրացավ։

Այդտեղ ի՞նչ դործ ուներ յերիտասարդ կոմիսարը։ Բայց Պոժարսկին ուշադրությամբ դիմում ե Շահն և նրա կնոջը։

— Զե վոր ամեն բան մեկ կողմ թողած, այսպիսի հարաբերություններն ուղղակի վիճակ են բերում ուղղական պատրաստությանը, — կես կատակով, կես լուրջ կերպով ասում եր նա։

Վերջապես, Պոժարսկին իր առանձնասենյակին և կանչում Շահն և խնդրում ե, վոր կինն ել մտնի։ Նա, միքի քաշվելով, փորձում ե մարդուն ու կնոջն ողնել, վոր երենց մէջև բարդած հարակիրությունները պարզեն։

Թէ ամբողջ գիշերը, առանձնասենյակում փակլած, նրանք ինչի մասին եյին խոսում, հայտնի չեն միայն, վոր դրանից հետո Շահն ընտանիքը համերաշի եր ապրում։

Պոժարսկին մարդկանց գեպի ինքը տրամադրելու զարմանալի հատկություն ուներ։ Կարծես իրեն հատուկ յումորով, առանց վիրավորելու, նա ձանապարհներ եր դատավագի մարդկանց սրաերը։

Արդեն վոչ ջահել, մի փոքր ուռած, հողեպույն գեմքով և վաղաժամ կնճիռներով ծածկված՝ դորձավար կ պարզապես դժգոհ եր վիճակից։

— Աշխատում ես, աշխատում, սակայն «դատարկությունից» դենը չես կնում։

Իսկ Կ. վերջին ժամանակը վատ եր աշխատում։ Հարց եր գրված նրան բանակից հեռացնելու։

Այս բանն իմանալով, յերիտասարդ կոմիսարը ծանոթացավ դորձավարի հետ, ուշադրությամբ դիմեց նրան ու խոսեց։

— Այսոր դուք ինչ վոր առանձնապես մոայլ եք։

— Այդպիսի աշխատանք ե, ընկեր կոմիսար ծիծաղելու բան չկա. ամբողջ կյանքը «յելից»-ի վրա յեմ վատնել։

— Ասում են խմում եք, — հանկարծ չեշտակի կերպով հարցնում ե կոմիսարը, և չես հասկանում կատակ ե ասում, թէ լուրջ ե ասում։

Կ. շիոթվեց։ Փորձեց կատակով, հին անեկդոտով բանը վերջացնել։

— Ճաշից առաջ մեկ ըմպանակ խմում եմ. դե, հենց վոր խմում եմ, ուրիշ մարդ եմ զանում. բայց այ, հենց այդ«ուրիշ մարդը» ճիշտ վոր խմել սիրում ե...

Պոժարսկին մոայլվեց. նրա շրթունքների անկյունները թեթև կերպով բարձրացան։

— Ուրեմն «ուրիշ մարդը» խմում ե, իսկ դուք այդ ժամանակ ուտո՞ւմ եք, ինչ ե, — հարցրեց նա և արդեն լուրջ կերպով ասաց։

Յեկեք սրտաբաց խոսենք, իսկ խոսելու բան կա։ Հենց նույն որը Պոժարսկին հայտնեց զորամասի հրամանատարին։

— Մեր դորձավարը կկորչի, այնպես կիմճե, վոր ինքն ել դլուխ չես հանի։ Պետք ե նրան...

— Արդեն վճռված ե, — ընդհատեց հրամանատարը, —

հարկավոր ե միայն արձակման մասին ռապորտ պատրաստել:

—... Նբան պետք ե առաջ քաշել և վոչ թե աշճակել: Այդ նրանում ձանձրույթից ե: Մարդը յերկար նստելուց ձանձրացել ե. իր աշխատանքից վաղուց ե գերածել: Մեկ խոսքով նրա վրա չեֆություն եմ գերցնում:

Եեվ միքանի որից հետո կ. անտեսական մասի հրամանատարի ոգնական նշանակվեց: Նա մեկեն աշխուժացավ. իմելը թողեց և հետադայում որինակելի հրամանատար դարձավ:

Հայրաբար հոգալով իր, խորհրդային մարդկանց մասին, ուղղելով նրանց թուլությունները, դժբախտության մեջ ոգնելով նրանց, Պոժարսկին անխնա յեր դեպի թշնամիները:

Արտաքուստ համեստ, գերազանցորեն աշխատառեր կարմիր բանակային կոմարովի ձիերը հաճախ եյին կառում, ավարիաներ, կոտրովածքներ եյին տեղի ունենում:

— Զահել ե, դեռ չի վարժվել, — ասում եյին նրա մասին:

Պոժարսկին սկսեց ուշադրությամբ հետևել նբան: Շատ անդամ նրան սրուաբաց զրույցի յեր կանչում: Կոմարովը դուր չեր գալիս կոմիսարին: Եեվ նրա հոտառությունը նրան չխարեց, — ակներեվությամբ աշխատանքը պարենջուատամ արտահայտվեց: Կոմիսարը շուտով մերկացրեց կոմարովին: Բանից դուքս յեկավ, վոր նա խոշոր կուլակի վորդի յեր, և գիտակցաբար վնասներ եր տալիս բանակին: Կոմարովն անմիջապես դատի տրվեց:

Կոմիսարն այսպես եր վարվաւմ թշնամիների հետ... Յակովլես, բանակ գալով, անկարգապահ կարմիր բանա-

կայիններից մեկն եր: Պոժարսկին վորպես այլեպան եր սնուցանում, մեծացնում ապագա բոլցերիկին—թասանի հերոսին:

Յակովլես Պոժարսկուց փոքր եր. նա ծնվել եր 1914 թվին: Շուտով վորբացավ, հորը, վոր ուրալյան բանյոր եր, սպանեցին ուսւ-զերմանական պատերազմի ժամանակ, մայրը մեռավ թոքախտից:

Սկսվեցին թափառումները — մանկատներ, փախուստներ, պատահական աշխատանք գյուղերում կուլակների մոտ: Այստեղ ինքը վոչինչ չուներ, ամեն ինչ ոտար եր, կյանքն ել այնքան ժամանակ եր ոտար թվում, մինչեւ վոր Յակովլեսին բանակ կանչեցին:

Նա նշանակվեց Պոժարսկու զորամասը:

Յակովլես վատ եր կրակում, իր ձիուն չեր սիրում, նույնիսկ նրանից վախենում եր, ամեն տեսակ անհաջողություն հիվանդոտ զգայնությամբ եր ընդունում:

— Ա'խ, Յակովլես, Յակովլես, լավ կարմիր բանակային եք, բայց ձեր ձիուն վատ ե: Այդպիսի ձիով կոլխոզում ջուր կրելն անդամ ամոթ ե, ուր մնաց թշնամուն խփել, — հաճախ կրկնում եր նրան Պոժարսկին:

— Բայց յես ի՞նչ անեմ, յես ձիուն չեմ խանդարում, նրա բնավորությունն ե մոայլ, — արդարանում եր Յակովլեսը:

— Իսկ դուք սիրեցեք ձիուն, չե՞ վոր նա ձերն ե, ձին ել ձեզ կսիրի: Այս պետք ե հասկանալ:

Յակովլես խուսափում եր այսպիսի խոսակցություններից, բայց ինքը ինամքով մաքրում եր ձիուն, ձգտում եր ավելի լավ խոտ տալ նրան:

Պոժարսկին կարծես անուշադիր եր դեպի կարմիր բա-

Նակայինի մարդախորշ լինելը : Վերջապես , ինչպես ինքն երանում՝ «Հարթելով նրա հարաբերությունները ձիռ հետ» , Պոժարսկին սկսեց Յակովին հրաձգություն սովորեցնել :

Նա սովորեցնում եր նրան՝ կրակելիս առանց շտապելու ուղղել նշանառության հատիկը , հանդիսա կերպով բռնեցնել նշանին :

— Շատ հասարակ բան ե , — սիրտ եր տալիս նա Յակովին , — գլխավորն այն ե , վոր չտաքանաք . նշավակը թըշնամի չե , վոչ մի տեղ չի վախչիլ . իսկ յեթե նշավակին չխփես , թշնամին ել կիմախչի :

Ինքը Պոժարսկին շատ լավ եր կրակում ամեն տեսակ զենք-հրացան , նապան , զնդագիր :

Յակովիկը ևս , նույնիսկ իրեն համար աննկատելի կերպով , սկսեց լավ կրակել : Բայց Պոժարսկին «Ճեռք չքաշեց» յերիտասարդ մարտիկից և նրա առաջ նոր խնդիր դրեց . — Կոմսոմոլի անդամ դառնալ :

— Առաջավոր յերիտասարդության հավասարվեցէք , — ասում եր նա :

Իսկ յերբ Յակովիկը կոմսոմոլիստ դարձավ , կոմիսարն ասաց .

— Դե , յեղբայր , այժմ արդեն մարտիկները քեզ կաշ-խատեն հավասարվել :

Յակովիկը լիուլի կերպով եր զնահատում կոմիսարի չողատարությունը , սիրեց նրան՝ ինչպես հոր , իր վողջ վորբային կյանքում առաջին անդամ այստեղ , բանակում , ջերմ , հայրական սեր զգաց :

Յակովիկն ուրիշ մարդ դարձավ : Շուտով նրան շտար կանչեցին : Ինչպես միշտ , Յակովիկը կոմիսարի մոտ մտավ չփոթվելով . յուրաքանչյուր այդպիսի այցելություն արթ-նացնում եր նրա միտքը , նոր լիցք եր տալիս :

— Դե , նստիր , Յակովիկ , զրույց անենք , — սկսեց կոմիսարը , — Կուսակցությունը կոմսոմոլին այնպիսի դորձ ե վստահացել , ինչպիսին քաղաշխատանքն ե : Այժմ բանակում կոմսոմոլի անդամներին քաղղեկների տեղակալների ու ող-նականների պաշտոնին են քաշում : Յես քեզ այս պատվա-վոր աշխատանքն եմ առաջարկում :

Յակովիկը զեկուցագիր ներկայացրեց , վոր ինքը մինչեւ մահ մնում ե Կարմիր Բանակում ծառայելու , և նրան քաղ-զեկի տեղակալի պաշտոնով ուղարկեցին ստորաբաժանում-ներից մեկը :

Կոմիսար Պոժարսկու չնորհիվ այսպես դասավորվեց նախկին անապաստան Յակովիկի ճակատագիրը :

Հետազյում ևս Պոժարսկին չի թողնում յերիտասարդ քաղեկին , հետեւում ե նրա ամմանը , ոգնում ե աշխատան-քում :

Մեկ անդամ հրաձգարանում նրան հանդիպելով , կո-միսարը հիշեց «անցյալը» :

— Հապա , բարեկամ , յեկ կրակենք :

Ցեվ , յերբ Յակովիկը յերեսուն հնարավոր կետերից քսան իննը կետը վայր դցեց , կոմիսարն անկեղծ դուռ-նակությամբ բացականչեց .

— Քաղղեկներն այլ կերպ չեն ել կարող կրակել :

Քաղղեկ Պանկրատովը Պոժարսկու զորամասը յեկավ 1936 թվին :

— Ինչպես այս բոպեյիս հիշում եմ , — պատմում ե նա այդ որվա մասին , — Պոժարսկին ինձ հանդիպեց փողոցում , զորանոցի մոտ : Յես զեկուցեցի , վոր յեկել եմ նրա տրամա-դրության տակ : Կրտսեր հրամանատարից ինձ քաղաշխա-տանքի եյին քաշել ընդամենը յերկու-յերեք ամիս առաջ : Այն բաժնում , ուր ինձ ուղղել եյին , աշխատում եր իմ

նախկին լեյտենանտը։ Պոժարսկին իսկույն նկատեց այդ և
ասաց։

— Առաջ լեյտենանտն եր ձեր պետը, իսկ այժմ դուք
նրա պետը կլինեք, — ահա թե ինչպես և ստացվում։ Բայց
վոչինչ, կիսուեմ նրա հետ, ամեն ինչ կբացատրեմ։ Հարկա-
վոր ե, վոր ձեզնում ամեն ինչ հարթ զնա, առանց խոր-
տուբորտությունների։

Եեվ կոմիսարն սկսեց ոգնել յերիտասարդ քաղղեկին,
վոր նրա ստորաբաժնումից «իսկական մարտական միա-
վոր» ստացվի։ Քաղղեկն անհամբերությամբ շարունակ
կոմիսարին եր սպասում իր մոտ։

Ցուրաքանչյուր քաղղեկ հաճույքով եր գնում Պոժար-
սկու մոտ, վորը միշտ ուշադիր կերպով եր լսում այցելու-
ներին։ Նրա ցուցումներն ընկերական եյին, զուրկ նույնիսկ
պաշտոնական ձեւականության սովորից։

Կոմիսարը քիչ յերիտասարդ աշխատավորներ չկտո-
տիարակեց, վորոնք հետազայում հերոսներ դարձան։ Իս-
լորի մասին պարզապես աներևակայելի յե պատմել։

Նրանցից յուրաքանչյուրիննա իր մոտեցումն ուներ։ Եեկ
մարտիկները Պոժարսկու մասին զուր չեյին կատակով ա-
սում։

— Նա ամեն մեկի սրտի բանալին ունի . . .

Այդ պատճառով ել նրանք իրենց ուրախություններով
ու ցավերով կոմիսարի մոտ եյին վազում։ Պոժարսկին
վոչ մի խնդիր, վոչ մի բողոք անուշադիր չեր թողնում։
Նա նամակներ եր գրում գյուղիներ ուրդներին, տեղական
լրագրերին, դեսուլերն եր ընկնում, ձեռք եր բերում։
Լրագրում անհասկանալի բառ ե պատահել, — ո՞ւմ հարց-
նել։ կոմիսարին։ Տղա յե ծնվել, — ինչ անուն տալ,՝
դարձյալ կոմիսարի խորհրդին են դիմում։

Զվարթ եր նա, կենսուրախ, զորամասի հոգին։ Ահա
կանգնած ե մարտիկների մի խումբ։

— Նու, ի՞նչ կասեք, սիրելիք, — հարցնում ե նրանց
մոտեցող կոմիսարը։ Վայելչակաղմ, ձկված, սափրված,
փայլուն մաքրված կոչկներով, առաջին հայացքից խիստ
ե թվում։ Բայց ահա խոսել սկսեց Գլխարկը թեթև կերպով
դեպի ծոծրակն ե թեքվել։ իսկ նրա տակից դուրս ե ընկել
խիտ ու սե մաղափունջ։ Աչքերը խանդավառությամբ փայ-
լատակում են։

— Ընկեր Սիդորչուկ, — հանկարծ ասում ե կոմիսա-
րը, — դուք վերջապես դաս՞ք ձեր գնդակը։

Մարտիկները տարակուսանքով կարմրատակած կարմիր
բանակայինին են նայում։

— Հապա, — բացատրում ե կոմիսարը, — վերջին հրաձը-
գության ժամանակ չորս գնդակ մի կերպ դիպան նշավա-
կին, իսկ հինգերորդը չկար, կորել եր, — և սպասելով
մինչև վոր ծիծաղը դադարի, արդեն լուրջ կերպով ավե-
լացնում ե, — հարկավոր ե դազգյահից շատ մարզվել։ Դի-
պուկությունը մեկեն չի տրվում։ Գնդակը անփոս չե վոր
կորավ, «ափսոս» ե թշնամին, վոր գնդակը չի ստանալ։
Բոլորս ել պետք ե մարզվենք։

Պոժարսկին միշտ իրադեկ եր զորամասի մարտական ու
տնտեսական բոլոր գործերին։ Նա ոդնում եր հրամանառա-
րին, հոգում եր զորանացների մաքրության մասին, հոգում
եր, վոր խռարարները համեզ ճաշ պատրաստեն։ Կոմիսա-
րին կարելի յիր տեսնել ամենաանսպասելի տեղերում։
Գոմում, վարակեղ խորհրդակցում եր բաժակի հետ, թե ինչ-
պես շուտ բժշկեն հիվանդացած ձին, մանեժում, վարակ
կարմիր բանակայիններին ցույց ե տալիս, թե ինչպես ա-

վելի լալ կարելի յե կտրտել վոստը, վենինյան անկյունում
նա հետեւում ե, վոր ցուցադրված լինեն նորագույն գրքե-
րը, վաճառարկղում հետաքրքրվում ե խմանալու՝ կա՞ն
արդյոք ծխախոտի դնայուն տեսակները, իսկ յերեկոյան
բյուրոյում ցուցյ ե տալիս պակասությունները և նշում, ե
նրանց վերացնելու ճանապարհները:

№ 8 ՍԱՀՄԱՆԱՆՇԱՆԻ ՄՈՏ

— Բայց և այնպես, ընկեր հրամանատար, ինչպես ու-
ղում ես, պայմանները պայմաններ, իսկ մարդկանց հա-
մար պետք ե բաղնիք կազմակերպել:

— Բայց հասկացիր, այստեղ վորոտեղ ես բաց անում...
— Ուղղելի դորձ ե, — հուղվում ե Պոժարսկին, — և
այս ել վոր ջրցան ունենա: Անպայման, զիտես, ջրցանը
տաք և սառը ջրով...

Անսպասելի հեռախոսային զանգն ընդհատեց հրամանա-
տարի խոսակցությունը կոմիսարի հետ:

— Տաղնա՞պ, — ասում ե զորամասի հրամանատարը՝
կախելով խողովակը. — Իսկույն ևեթ դուրս ենք զալիս...
Ուրեմն... ասում ես ջրցանով, — հանկարծ նա ընդհատում ե
իր մտքերը և ուսերի ճարպիկ շարժումով ուղղում ե դոսու-
փոկը. — Ջրցանով ել կշինենք: Յեկ յերկուսն ել — հրամանա-
տարը և կոմիսարը — շտագում են դուրս դալ շտաբից: Իսկ
վողաշարն արդեն մարտական տակնապն ե փչում: Կուշտ
ձիերն իրենց սանձն են կրծոտում: Շարք շարք կանգնում
են մարտիկները, վոտքի վրա ուղղելով վերնահաղուստ-
ները, կառդի բերելով հրացանների փոկերը:

— Զի հեծնել, — հնչում ե սովորական հրամանը:

Զորամասը վարդով դուրս ե բերվում թշնամու դեմ:

1936 թվի մարտի 25-ի առավոտը յոթ զինված ճապո-
նացիներ անցան խորհրդային սահմանը, բայց անմիջապես
դուրս քշվեցին մեր հողից: Յերեկվա ժամի 3-ին թշնամու
արտելքը կրկնվեց: Մոտ վաթսուն ճապոնացիներ սահմա-
նային №8 նշանի մոտ ձեռքի ու հաստոցավոր զնդացինե-
րով յերկուհարյուր հիսուն մետրի չափ խորացան խորհր-
դային տերիսորիան:

Դեռ ճանապարհին Պոժարսկին բացատրում եր.

— Հաշվի առեք, զաս տալ ճապոնական հափշտակիչ-
ներին, նրանց վանդելը հանձնված ե վոչ թե մեկ ուրիշ,
այլ մեր զորամասին: Այս պետք ե հասկանալ, — բազմա-
նշանակալիորեն ակնարկում ե կոմիսարը:

... Ճապոնացիները զորամասին հանդիպեցին կատաղի
կրակով:

Մարտիկներն շտագեցին, պառկեցին:

— Ե, ինչպես ե տրամադրությունդ, — մեկ մարտիկից
զեպի մյուսը սովարով, հարցնում է կոմիսարը և միենույն
պատասխանն ե ստանում:

— Դե վոր լավ ե, — այդ լավ ե:

Ինքը Պոժարսկին այդ կովի մասին համեստ կերպով
այսպես եր հիշում.

— Մարտիկների տրամադրությունը հրաշալի յեր:
Համարձակ կերպով առաջ ենք զնում հափշտակիչների վրա:
Յես, վորպես կոմիսար, հասկանալի յե, առջևումն եմ...
Առաջ ենք գնում: Յեկ հանկարծ այս ժամանակ տեսնում եմ
մարտիկներից մեկին, լավ տղաներից մեկը, վոր վազում
ե բաց կերպով, նույնիսկ գլուխը համառօրեն բարձր բըռ-
նած: Յես բորբոքվեցի — իմ կյանքում առաջին անդամ

բանակում զսուռմ եմ նրա վրա, իսկ նա ինձ պատասխանում ե. «Վոչինչ, ասենք թե, ընկեր կոմիսար, մենք պրահապատված ենք. մեզ դնդակը չի տանի»:

— Կամ իսկույն պառկեցեք, կամ յես ձեզ թիկունք կողարկեմ: Իսկապես դա ի՞նչ անկարգություն է, այդպիսի քաջությունն ում ե հարկավոր: Այդ հո հաստատ հիմար մահ ե. իսկ մենք պետք ե այնպես գործենք; վոր թշնամուն մահախոցենք, իսկ ինքներս կենդանի մնանք:

Կոմիսար Պոժարսկին դեկավարում եր աջ թեփ կոփվը: Կարմիր մարտիկները— մեր հայրենիքի յերիտասարդ հայրենասերները— պատվով Եյլն կատարում առաջադրված ինդիրը: Կոմիսարն իր անձնական որինակով վոգեռում եր նրանց:

— Այս «հյուրերին» թույլ չենք տալ գևշերելումքեր հոգում,— ժպտում եր նա:

Նույնիսկ փորին հասած վերքը չչփոթեց կոմիսարին. շտապ կերպով վերքը կապելով, նա շարունակում եր մարտիկներին հրապուրելով առաջ տանել:

— Ահա և այն, կովով ստուգելը,— մտածում եր կոմիսարը,— քննությունը պատվով բռնեցինք:

Մութն ընկնելուն պես թշնամին կատարյալ իրարանցումով դեպի իր յերկիրը քաշվեց, խորհրդային տերիտորիայի վրա թողնելով գենք, հանդերձանք, ուազմապիտույք: Ճապոնացիները նույնիսկ դեկուցումներ անելու ժուռնալը «մոռացան»:

— Այ թե կազմվածք ունեք հա՛, իվան Ալեքսեյեվիչ, — ասում եր Պոժարսկուն բժիշկը՝ վիրակապության կայանում: — միայն թե ինչո՞ւ եյթ մնում կովում, ինչո՞ւ ձեզ վոչ-վոք չողնեց, վոր ավելի շուտ գայթե ինձ մոտ:

— Իսկ վոչ վոք ել չեր տեսնում... Ստուգումը կովով ավինք: Այս բանը, բժիշկ, պետք ե հասկանալ:

1936 թվի ապրիլի 2-ին ԽՍՀՄ կԳԿ մեր հեռավոր արեւվելյան սահմանները պաշտպանելու ժամանակ ցուցաբերած զգաստության ու քաջության համար զորամասի կոմիսար իվան Ալեքսեյեվիչ Պոժարսկուն պարզեատրեց կարմիր Աստղի շքանշանով:

Կարգը սահմանում վերականդնվեց: Զորամասը վերապարձավ իր սովորական կյանքին: Այսպես շարունակվեց մինչև աշուն, յերբ հանկարծ հայտնի դարձավ, թե Պոժարսկուն գործուղում են Մոսկվա, կուրսերը:

Զորամասն հուզվեց: Այս նորությունն իրար վշտով ելին հայտնում ե' մարտիկները, և' հրամանատարները, և' քաղաքատողները և նրանց ընտանիքի անդամները:

Մեկնելու նախորյակին վերջին անգամ ժողովվեցին մարտական ընկերները, վորոնք № 8 սահմանային նշանի մոտ առաջին կրակային մկրտությունն ելին ընդունել. ժողովվեցին, վոր իրենց սիրելի կոմիսարին Մոսկվա ճանապարհեն:

Պոժարսկին մատիոհ ե: Նա չեր թագյնում, վոր ինքը ցավում ե ընկերներից բաժանվելու համար, բայց միաժամանակ նրան իր կողմն եր քաշում Մոսկվան:

— Պահանջվում ե սովորել, — սրտաբաց կերպով ասում եր նա, — չե՞ վոր մեր ժամանակի համար յես կիսազրագետ եմ, — և հուզմունքը թագյնելու համար կատակով վերջացնում ե... — դեռ կհանդիսենք... նույնիսկ անպայման կհանդիպենք:

* * *

... Որորվում են հեռավոր արևելյան եքսպրեսի վաղոնները, վոր կոմիսարին Մոսկվա յեն տանում:

Նրանց համաչափ դարկի տակ հեշտ ե մտածելը :

— Այո՛, բանակն իմ համալսարանը յեղավ։ Յոթ տարի առաջ վերջացրի գնդի դպրոցը, յեղա կրտսեր հրամանատար, դասակի հրամանատարի ոգնական, այժմ կոմիսար— զնում եմ Մոսկվա սովորելու։ Յոթ տարի, իսկ այնպես ե թվում, թե դա բոլորովին նորերս ե յեղել…

… Լուսաբաց ե։ Վաղ առավոտյան մառախուղում նկարվում են Մոսկվայի դեռ վոչպարզ ուրվագերը. այն քաղաքի, վորտեղ Ստալինն ե ապրում և աշխատում։

… Ժամանակն արագ թուավ, անցավ։ Գրքեր, թանգարաններ, թատրոններ, նոր ընկերներ։ Պոժարսկին պարապում ե հափշտակությամբ։ Անցյալը կարծես նոր լուսով ե լուսավորվում, աճում ե սերը դեպի ներկան, դեպի դեղեցիկ հայրենիքը, դեպի Լենինի-Ստալինի կուսակցությունը, աչքերն ավելի պայծառ են դառնում։

Ահա և դասընթացներն ավարտվեցին։ Պոժարսկին դիմում ե հրամանատարությանը և խնդրում, վոր իրեն յետ, իր զորամասն ուղարկեն։

— Զե՞ վոր յես արդեն վորձ ունեմ, յես դեռ 1936 թվին հարվածեցի ճապոնացիներին, ուղղեցիք Հեռավոր Արևելք, սահմանին ավելի մոտ։

Պոժարսկու խնդիրը բավարարեցին։ Նա մեկնեց յետ դեպի իր զորամասը։

ՀԻՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԵԶ

Ազգաշան։

— Յելնե՛լ։ Վեր կա՞ց։ Պատրաստվել լիցքային վարժության ։ Հնչում ե հերթապահի սովորական հրամանը։ Շուրջն ամեն ինչ կենդանանում ե, լովում են ծիծաղ, վաղող ու շտապող կարմիր բանակայինների ձայներն ու վոտների գոփյունը։

Սկսվում եր սովորական աշխատանքային որը՝ լի նոր տպավորություններով, ուրախություններով, կարմիր բանակային դեպքերով, աքտահերթ հրաձգություն։ Վաշտային պոստի թերթում ծիծաղաշարժ ծալրանկար ե զետեղված «մեխաքարների» (դերգան) վրա։ Յ-րդ մասի հրամանատարն աղջիկ ե ունեցել, իսկ նա տղա յեր ուղում. ասում են՝ յերեկոյան կինո յե լինելու…

Յեվ հանկարծ բոլոր դեպքերը յերկրորդական տեղ են բանում։

— Կոմիսար Պոժարսկին ե յեկել։

— Այսոր ասլրիլի 1-ը չե։

— Որակացուն ինքն ե տեսել։

— Ինչպես չե. նա Մոսկվայից կոտ այստեղ քեզ մոտ։ Յերեկ, զիտնական ե դարձել…

— Դա Պոժարսկին չե, այլ քաղբաժնի հրահանգիչն ե, ինձ խոհարարն եր ասում, միայն չատ նման ե մերինին։

— Իսկ այդ Պոժարսկին ո՞վ ե, նա՞ յե, վոր Մոսկվայի հրապարակում կանգնած ե Մինինի հետ…

— Դեռ չուտ ե խոսելը։ Գուցե Պոժարսկուն միայնակ արձան կդնեն։

Հայտնի չե, գեռ յերկար կտևելու այս վեճը, յեթէ չանկարծ գոներում չերևար ինքը իրարանցման «պատճա-

ուր»— Պոժարսկին, վորն արդեն ամբողջ զորամասի կոմիսար եր նշանակվել:

— Զգա՞ստ. ընկեր կոմիսար, վաշտը վարժությունից ե յեկել և թեյի յե պատրաստվում:

— Բարեկ ձեղ, ընկերներ:

— Բա—ա— և անսպասելի «ուսա»-ն, վոր կանոնադրությամբ չեր նախատեսված, վողջունում ե կոմիսարին:

— Ե, ինչպե՞ս եք կովում այստեղ:

— Մենք ինչ, պատմեցեք, ինչպես ե այնտեղ, Մոսկվայում:

— Անչուշտ կպատմեմ,— և դառնալով դեպի հերթապահն, ավելացնում ե, վաշտը կանոնեցրեք թեյի համար. ուշանում եք:

Յերեկոյան, յերբ ավարտի աղդանշանը տրվեց, կարմիր բանակայինները սեղմ ողակով շրջապատեցին իրենց կոմիսարին, վորը պատմում եր Մոսկվայի մասին, իհարկե, ամենից առաջ հռչակալոր Մետրոյի, հիասքանչ Վոլգա-Մոսկվա ջրանցքի մասին...

Իսկ ուշ յերեկոյան, նստած բարեկամների շրջանում, Պոժարսկին ասում ե.

— Մոսկվա գնալն ինձ անչափ շատ բան տվեց: Հարկավ դու ևս, Յակովիկ, կղնաս այնտեղ: Միայն չիարծեք, թե այնտեղ սովորելն այնքան հասարակ բան ե: Յես նույնիսկ չեյի յենթադրում... Պետք եր լինում դլուխ ցավելու չափ պարապել: Բայց փոխարենն այսոր ինձ մեկ ամբողջ պիտի բարձր եմ զգում: Այժմ շատ բան պարզվեց. ժողովրդի թշնամիները, Փաշխստական վարձկանները խցկվել են բանակը, նրանց աղենտները փորձել են մեր շարքերում:

Ընկերներ, մեծ զգոնություն ե հարկավոր: Այս պետք է հասկանալ:

Ինքը Պոժարսկին շատ լավ եր հասկանում «այս»: Նա համարձակ կերպով ընկնում ե հայրենիքի թշնամիների վրա. առաջինն ե մերկացնում մարտիկներին սովորեցնելու թշնամու, այսպես կոչված, կոմպլեքսային մեթոդը: Զայրություվ ու համոզեցուցիչ ե հնչում նրա ձայնը, յերբ խոսում ե Փաշխստական թափթափուկների ստոր արարքների մասին: Պոժարսկին ժողովրդի թշնամիների դեմ պայքարելու փորձ ուներ արդեն: 1932 թվին նրան № քաղաքի վաշտի քաղղեկ նշանակեցին:

Ամրացած և միանգամայն ուղմապատրաստ զորամասն № քաղաքից ուղարկվեց Հեռավոր Արևելք: Ամեն ինչ լավ եր: Հրամանատարները խրվում եյին աշխատանքի մեջ, սովորում, մարտիկներին սովորեցնում եյին: Զորամասը մեկ ամուր, հաղթանակի համար միահամուռ կամքով զողված կոլեկտիվ եր:

Միայն զորամասի հրամանատարն եր իրեն մեծամիտ պահում, աղայաբար քամահրում եր ինքնաքննադատությունը, նրան անվանելով «քաղաքացիական մնացուկ դիտակցության մեջ»:

«Ի՞նչ եք ցույց տալիս ինձ: Հաճեցեք դատողություն չանել: Բանակը ձեզ համար արտադրական խորհրդակցություն չե», — սովորաբար ընդհատում եր նա կուսակցական ժողովներում յելույթներ ունեցող հրամանատարներին ու քաղղեկներին:

Մեկ անգամ այդպիսի ժողովներից մեկում բոլոր յեւութները լուս լսելով, հրամանատարը հանկարծ վեր

թուավ և խիստ կերպով հայտարարեց, վոր վոչ մի քննա-
դասություն և ինքնաքննադասություն չի թույլ տա:

Պոժարսկու պնդելով կուսակցական բյուրոն վորոշեց
կուսակցական ժողովներում քննարկել քննադասության և
ինքնաքննադասության հարցը բանակային պայմաններում
և զեկուցողներ նշեց :

Զորամասի հրամանատարն անմիջապես զնաց իշխանու-
թյան մոտ և զեկուցեց այն այլանդակությունների մասին,
վոր անում և Պոժարսկին» :

Սրա հետեանքն այն յեղավ, վոր Պոժարսկին դոնվեց . . .
կոռպերատիվ աշխատանքում, իր զորամասից դուրս :

Նա շատ ջանք թափեց, մինչև կարողացավ նորից զո-
րամասը վերադառնալ :

Պոժարսկին գեռ չգիտեր, վոր զորամասի հրամանա-
տարը ժողովրդի թշնամի յե, լրտես ե, զավաճան ու ստոր
մատնիչ, Պուտնայի գրած մարդի ե: Նա չգիտեր, վոր Փա-
շիստական վարձկան Պուտնան հրաժայել ե ազատվել Պո-
ժարսկուց, վոր ժողովրդի թշնամիների անհաշտ մարտիկն
եր :

Կուրսերի պարապմունքները զուր չանցան: Ներծծելով
մարքսիզմ լենինիզմի դիտելիքները, մեկ անդամ ևս
ուսումնասիրելով կուսակցության պատմությունը, խոր
կերպով ուսումնասիրելով լենինի, Ստալինի յերկերը, Պո-
ժարսկին այլևս վոչ թե «հոտառությամբ», այլ ստացած
գիտելիքների հողի վրա ջարդում եր թշնամիներին :

Ստոր Փաշիստական վարձկաններն ու լրտեսները,
խցկվելով Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի որ-
դանները, աշխատում ելին ամլացնել, ի չիք դարձնել կու-
սակցական սկզբնական կազմակերպությունների դերը :



Խորհրդային Միության Հերոս ի. Ա. Պոժարսկի

Հրամանատարի Փունկցիաներում՝ «չմիջամտելու» սկզբունքին հետեւելով (Պոժարսկին և նրա ընկերները լավ եյին հիշում, թե իր ժամանակ իրենք ինչ պայքար են տարել ինքնաքննադատություն ծավալելու համար), ժողովրդի թշնամիներն աշխատում եյին կոմունիստներին հեռացնելու ուղմական և քաղաքական պատրաստությանն ակտիվ կերպով մասնակցելուց :

Հենց այս պատճառով ել, չնայելով կոմիսարի բոլոր ջանքերին, ստորաբաժանումներում վոչ մի ամուր ստորին կուսակցական կազմակերպություն չկար, այլ միայն տեղադրել միացած կուսակցական-կոմունիստական խմբեր դություն ունեյին :

Այժմ հասկանալի յեր, թե թշնամիների ինչին եր պետք այդ :

Պոժարսկին ել տասնապատկած յեռանդով պայքարում եր ստորին կուսակցական կազմակերպությունների միացման, նրանց զարգացման, կոմունիստների ակտիվ մասնակցության համար՝ մարտական նախապատրաստմանը և ստորաբաժանումի ամբողջ կյանքին :

Կոմիսարը մանրազին կերպով դիտում ե մարդկանց, ուսումնասիրում ե նրանց, պատասխանատու առաջադրանքներ ե հանձնում նրանց :

Գանի դեռ Պոժարսկին Մոսկվայումն եր, շատ նոր մարտիկներ եյին յերկացել զորամասում, նա ուզում եր ձանաչել յուրաքանչյուրին :

Մինելնիկովը ջահել կարմիր բանակային ե, զարգացած կոմյերիտական ե, համեստ, լուրջ մարդ ե:

Կոմիսարը յերկար զրուցում ե նրա հետ, պատմում ե, թե ինչպես պետք ե աշխատի բանակային կոմյերիտականը :

Յեվ, համոզվելով, վոր ընտրությունը ճիշտ ե, Մինելնիկովին կոմյերիտական կազմակերպության քարտուղարության համար առաջ ե քաշում :

Հետաղայում, Մինելնիկովն արտաժամկետային ծառայության մնալով, առաջ քաշվեց վորպես քաղղեկի տեղակալ :

Պոժարսկու մասին հետաքրքիր շատ բան կարող եր պատմել նաև կոմսոմոլի մյուս քարտուղարը՝ կրտսեր հրամանատար Մտոլյարովը։ Նա քարտուղար ընարվեց՝ վոչ մի փորձ չունենալով։ Պոժարսկին ամեն որ ոգնում եր նրան, վոչ մի կոմյերիտական ժողով չեր լինում, վորին նա ներկա չլիներ :

Քանի վոր կոմիսարը Մոսկվայումն եր, զորամասի ռազմական և քաղաքական պատրաստությունն ընդհանուր մակարդակից մի փոքր յետ եր մնում։ Աշխատանքի մեջ իսկական զողվածություն, սերտ կապ չկար, իսկական պայքար չկար «զորամասի մորիկիլիզացիոն պատրաստության» համար, ինչպես սիրում եր ասել Պոժարսկին :

Կոմիսարն սկսեց պետերի կազմից։ Հրամանատարներին հավաքելով, յերկար զրուցում եր նրանց հետ։ Նրա ջերմ, վոգեվորիչ խոսքերը մինչև այժմ ել մնացել են նրանց հիշողության մեջ։

— Ընկերներ, այնպես պետք ե աշխատել, վոր կարելի լինի միենույն կետին խիել։ իսկ այդ կետը ուղմական ու քաղաքական պատրաստությունն ե։

Զորամասում այնպիսի հրամանատար չկար, վորի հետ կռմիսարն իր առանձնասենյակում ժամերով չխոսեր։ Մեծ համոզմունքի ուժը, բոլցեկյան խոսքի ուժը, Պոժարսկու անձնական հմայքի ուժը։

Բեկումն սկսվեց։

Կոմիսարն ինքն եր որինակ տալիս մարտիկներին ու Հրամանատարներին։ Նրա դալու առթիվ զորամասի ստորաբաժանումներն արդեն զանազան նոր, ահեղ մարտական մեքենաներ ունեյին։ Զահմանակակվելով Հրամանատարական ուսուցումով, կոմիսարն ինքնուրույն կերպով ուսումնասիրում էր զինվորական գործը, մինչև ուշ դիշեր նստում եր գրքերով և ուսումնասիրում ե այն բարդ տեխնիկան, վորով կուսակցությունն ու կառավարությունը զինել ելին բանակը։

Պահանջել մարտիկից առաջադրանքի լավագույն կատարում այն ժամանակ միայն կարելի յե, յերբ ինքուայդ գործն ամենայն նրբությամբ դիտես, — սիրում եր կրկնել կոմիսարը։

— Ինչ նագանց ասես, կարելի յե «զերազանցի» կրակել։ — ասում եր Պոժարսկին վայ հրածիկներից մեկն ու մեկին, — պետք ե միայն նշանառության կետը գտնել. իսկ դրա համար սովորել, աշխատել և պետք։ Առանց սովորելու վոչինչ չի դուրս գա։

Ցեղ ինքը կոմիսարն աշխատում եր առանց ձեռները ծալելու։ Նա հաճախ և հաճույքով զեկուցումներ եր տալիս և զորամասում վոչ-վոք չի կարող դեթ մեկ դեպք հիշել, յերբ զեկուցողը պատրաստված չլիներ։ Միշտ կոնսպիկու, որինակներ լրադրերից. գեղարվեստական յերկերից, լենինի և Ստալինի յերկերից մեջբերումներ, վոչ մի պնդում առանց ապացույցի։

Կոմիսարն առանձնապես խնամքով ե ուսումնասիրում լենինի և Ստալինի յերկերը։ Ստալինի հասարակ խոսքերում, վորոնք հենց սիրուն են թափանցում, կոմիսարը պատասխաններ և մինտում Հրամակ հարցերին, ուժ և պանում իր յեռուն զործունեյության համար։

Առավոտներն իրենց պահակատեղից վերադառնալիս, կարմիր բանակայինները հաճախ ելին կոմիսարի բնակարանում կանաչ լուսամփոփի տակ լամպի մենավոր լույս տեսնում, նրա տակ ել գրքի վրա կուցած Պոժարսկուն։

— Հապա յե՞րբ ե քնում նա, — զարմանում ելին նրանք։

... Առավոտյան, թարմ սակրված, դեռ վեր կենալուց առաջ, կոմիսարը բարեկում եր որակացուին։

Թերես կոմիսար Պոժարսկու աշխատանքի մասին ամենից լավ կարելի յե իմանալ այն դիտողություններից, վոր նա արել ե իր հուշտետրում։

Ահա նրանցից միքանիսը։

«Այնպիսի նենդ թշնամու հարեան լինելով, ինչպիսին ձապոնիան ե, մենք պետք ե զորամասը բարձր ուսումնական պատրաստության մեջ պահենք, միշտ պատրաստ լինենք յետ մղելու թշնամուն...»

«Մազմական և քաղաքական ուսումնքով ընդդրկել բոլոր մարտիկներին և Հրամանատարներին։ Պարապել միայն դաշտում, զինվորական պայմաններում։ Հրամանատարի հետ միասին անհրաժեշտ ե մտածել դիշերային պարագաներու մասին»։

«Մակրավորներին պակասում են յերեք զույգ սպիտակեղեն, վոտների փաթաթաններ, վերմակներ, ներքնակներ, սավաններ՝ ուղարկել...»

«Մեղվեղեի համար կոչիկներ կամ բոտինկաներ ու պարկել։ Գոլոտնեից կամ Մելենտյեվից հինգ զույգ կոչիկ վերցնել»։

«Մեղավը թամբը դրել եր ավագի վրա։ Սիմուչկինը հրացանի հետ անդույց և վարվում։ Մակարովը հեծմա-

ոի սնալները լրիվ հաշվի չի առել, այնինչ յես դդուշացրել եմ...»

«Մարտիկներից միքանիսը փնթի տեսք ունեյին, ոճիք-ները բաց եյին... կապը թուլացել եր— աշխատանքում ընդմիջումներ կային...»

«Նենդ թշնամին— ձապոնիան— աշխատում ե մեղ մոտ լրտես-դիվերսանտներ գցել: Աչալը ջությունը պետք ե հարյուրապատկել...»

«Վ.—ին պետք ե ավելի մոտիկից դիտել»:

(Այս գրանցումը վկայում է կոմիսարի խորաթափան-ցության մասին, վորովհետև Վ. շուտով մերկացվեց վոր-պես Փաշխատական ագենտ):

1937 թվի աշնան տեսչական ստուգատեսի ժամանակ դրամասը մարտական և քաղաքական պատրաստությունից «լավ» դնահատական ստացավ:

Բայց ստացված թվանշանը հրամանատարի և կոմիսարի գործը չպակասեցրեց: Ընդհակառակը. նա պարտավորեց-նում եր աշխատել ավելի լավ, ավելի համառ, մանավանդ վոր ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընտրությունների պատ-րաստություններն եյին սկսվում:

Պոժարսկուն միաձայն առաջարկում են վորպես տեղումասային ընտրական հանձնաժողովի նախագահ: Մեկ ըուպեանդամ չդադարեցով հոգալ զորամասի վերաբերյալ, նա յեռանդուն կերպով պատրաստում է նրան պատմական ընտրությունների համար:

Կոմիսարը հափշտակությամբ դեկավարում է Ստալինյան Սահմանադրությունն ուսումնասիրող խմբակին: Պետք եր ներկա լինել տեսնելու, թե նա ինչ հուզմունքով եր ըս-

ցատրում յերկրի հիմնական որենքի նշանակությունն ու մեծությունը:

— Ընկերներ, յես լավ եմ հիշում, թե ինչու եյի վորպես հողափոր և փայտահատ աշխատում և որական հիսուն կոպեկ վաստակում, և դողում եյի, վոր վաղը, այսոր, մեկ ժամից հետո կարող եմ առանց աշխատանքի մնալ, մնալ վորպես այնելորդ բերան կիսաքաղց ընտանի-քում: Իսկ այժմ աշխատանքի իրավունքն ապահովված ե Սահմանադրության 118-րդ հոդվածով: Ճաշվա ընդմիջում: Հատկացնելու մասին մենք մտածել անդամ չեյինք համար-ձակվում, իսկ այժմ ԽՍՀՄ-ի քաղաքացիները հանգստի իրավունք ունեն: Յես ստիպված եյի դպրոցը թողնել 2-րդ դասարանից, իսկ այժմ 121-րդ հոդվածն ապահովում է կրթություն ստանալու մեր իրավունքը: Յես յե՞րբ սկսեցի սովորել, միայն խորհրդային իշխանության ժա-մանակ: Ընկերներ, այս պետք ե հասկանալ:

Պոժարսկին զրուցում է մարտիկների հետ, բայցարելով՝ ՄԵծ Սահմանադրության առանձին հոդվածները, յելութ-ներ և ունենում ժողովներում, հոգում և հրամանատարների ընտանիքների մասին, վորպեսզի նրանք ևս դիտենան իրենց պետության հիմնական որենքը:

Վերջապես՝ վազուց սպասված 1937 թվի դեկտեմբերի 12-ը: ՄԵծ ընտրությունների որը: Նախորյակին կոմիսարը պառկեց քնելու առավոտվա չորրորդ ժամին,— ստուգում եր, թե արդյոք բոլոր տեղամասերը պատրաստ են, քվե-արկության համար բոլո՞ր խցիկներում թանաք, գրչակո-թեր կան, զարդարում եր լենինյան անկյունը, ոգնում եր լոգունզներ կամելուն:

ՏԱԳՆԱՊՈՎ

— Ծրաբները փակցնելու համար չմոռանաք ջուր և սպունդ դնել, — ասում են նա հերթապահին...

Զարմացած որակացուն առավոտվա ժամի օ-ին տեսավ, թե ինչպես կոմիսարն առույց, նույնիսկ թեթև կերպով բուրացողված արդեն չենքն եր մտնում.

— Ե, ինչպես ե, ընկեր որակացու, մարտիկները քնա՞ծ են, — հարցուց նա:

— Յելնելու նշան դեռ չի տրված, բայց շատերն արդեն վեր են կացել: Այսոր որն ե այդպես, ընկեր կոմիսար...: Թույլ տվեք, վոր որակիչերային (սուոչնայի) կարգախումբն առաջինը քվեարկե, թե չե արդեն հերթ են բռնում:

Ժամի վեցն ե:

— Քաղաքացի ընտրողներ, — հուզված հայտարարում և կոմիսարը, առաջ զալով դեպի դալար ծաղկեզդթաներով ու նկարներով զարդարված շինության մեջտեղը. — Համեցեք, կարող եք ստանալ բյուլետեններ ձայն տալու համար:

Ընտրություններն անցան փայլուն կերպով: Կոմունիստների և անկուսակցականների բլոկի հաղթանակը հաստատեց Խորհրդային Միության ժողովուրդների կատարյալ միասնությունը:

Հենց այսպիսի արդյունքով վերջացան ՌԽՖՍՀ-ի Գերապույն Խորհրդի ընտրությունները:

Խասան լճի դեպքերից վոչ շատ առաջ կուսակցական կազմակերպությունը Պոժարսկուն Պոսյետյան ույանի կուսակցական կոնֆերանս ուղարկեց, վորտեղ նրան ընտրում են կուսակցական ույանական կոմիտեյի կազմի մեջ և վորտեղ պատրամավոր ուղարկում են մարզային կուսակցական կոնֆերանսին մասնակցելու...

Ճապոնական Փաշխտների 1938 թվի հուլիսի 9-ի նոր պրովոկացիայի մասին հայտնի դարձավ ցերեկը, և հենց նույն որն ել հրաման ստացվեց՝ հարձակվելու պատրաստվել:

Կոմիսարն իսկույն ևելի ժողովեց քաղղեկներին և հիշեցրեց, վոր նրանք մի անդամ ել զրույց ունենան մարտիկների հետ, ստուգեն նյութական մասը, ձիերը—ամեն ինչ արդյոք պատրաստ ե առաջիկա արշավանքի համար:

Պոժարսկին հանդիսատ եր:

— Անպայման բացատրեցէք մարտիկներին ընկեր Լիտվինովի հայտարարությունը ճապոնական դեսպան Սիկեմիշուին: Այս որինակով ցույց տվեք ճապոնական լմպերի ավագի քաղաքականության վողջ ագրեսիվությունը: Այս, հիշեցեք նաև, վոր ավելի լավ փաթաթեն վոտի փաթանաները և խմելու ռեժիմ պահեն: Յեթե վոչ՝ վերջերքս 2-րդ գասակի սպարապմունքների ժամանակ հենց առաջին ժամին ջուր խմեցին, իսկ այսուհետև ամբողջ որը տանջվեցին:

Պոժարսկին վոչ մի մանրունք աչքաթող չեր անում:

Նա նույնիսկ քաղղեկների դաշտային պայուսակներն ստուգեց՝ չե՞ն մոռացված արդյոք քարտեզները, որա՞ծ են մատիտները: Յուրաքանչյուր քաղղեկ կոնկրետ առաջապահ ստացավ, ինչպես պահել իրեն և յերթի ժամանակ ինչ անել:

— Աղմուկ չբարձրացնել. Հանդիսատ կերպով բացատրել իրադրությունը, — ճանապարհ եր դնում իր ողնականներին կոմիսարը, իսկ միքանի բոսկ հետո ասում եր իր կնոջը—Ռիքա Խվանովնային.

— Քանի վոր դու այստեղ ես մնում, ժողովիր ընկերուհիների, ոգնեցեք սպիտակեղենով, զբաղվեցեք հագուստեղենը կարկառելով, թաշկինակներ կարելով... Ինձ համար չվախենաս, չչուզվես, բոլշեիկը չի կարող կորչել:

Ուզա իվանովնան ակտիվիստուհի յեւ և հասարակական աշխատող: Նա ևս, ինչպես և մարդը, Արդատովլից եւ: Չքալորի աղջիկ: Նրա ազգականներն այժմ Արդատովի կուլիողում են ապրում:

Ամուսնության տարիներում նա անչափ աճեց: Այստեղ ևս կոմիսարի արժանիքն եր, վոր նրա համար լսելի կերպով լրագրեր եր կարդում, դրֆեր եր բերում, ոգնում եր, վոր սովորի, հասարակական աշխատանքի մեջ եր ներգրավում:

— Դու կոմիսարի կին ես: Դու բոլոր դործերում պետք եռ որինակ ցույց տաս, — հաճախ ասում եր նրան Պոժարսկին:

Կանանց աշխատանքի կողմից այն զորամասը, վորտեղ կոմիսար եր Պոժարսկին, լավագույնն եր համարվում: Ուղար իվանովնայի վրա նա կատարելապես հույս եր դնում:

Հանկարծ լուր տարածվեց, թե նրա զորամասը ճակատ չի գնալու: Վհատություն տիրեց մարտիկներին, բայց լուրը ճիշտ դուրս չեկավ:

Եերեկոյան ժամի իննին մոտոցիկլետը բերեց վաղուց սպաված հրամանը— վոչնչացնել չափը կորցրած թշնամուն, վոր ամրացել ե Զառղերնայայի բարձունքի հարավային լանջերում:

Կարճ միտինդ: Մարտիկները կանգնած են լուր: Ժլան են զորամասի հրամանատար լուսկինի խոսքերը: Կոմիսարը նույնպես խոսքերով ժլատ է: Հանդիսաւ ու համեզ-

ված են խոսում նրանք կարմիր Բանակի հղորության մասին, Խորհուրդների Յերկրի խաղաղ ու անդրդվելի քաղաքականության մասին:

— Հեռավոր Արեվելքի համար հայրենիքի լավագույն զավակների շատ արյուն ե թափվել: Վոլոչայեվկայի մարտերում ճապոնացիներն աներևակայելի փշալարերի փակոց եյին սարքել: Թվում եր, թե չկա այն ուժը, վոր կարողանա նրանց քանդել: Իսկ կարմիր Բանակը քանդեց առանց մկրատների, առանց բահերի, առանց հատուկ հարմարությունների.— Հերոս կարմիր բանակայինների մեկ վաշտ ինքնակամ կերպով պառկեց լաքերի վրա, իսկ նրանց վրայով ամբողջ բանակն անցավ: Ահա թե այդ մարդիկ ինչպես եյին սիրում իրենց հայրենիքը, երենց ժողովրդին: Այժմ, այդպիսի զնով նվաճած յերկերը կարելո՞յ յեւ տալ հենց այնպես, — վերջացրեց կոմիսարն իր յելույթը:

Մարտիկներն իրենց կոմիսարին յերբեք այսպես չեյին տեսել: Նրա յուրաքանչյուրը խոսքը հոգու խորքն եր ընկնում, հիշվում եր ամբողջ կյանքում: Կարիք եր զգացվում ավելի շուտ հանդիպել թշնամուն, խորտակիչ հարված հասցնել նրան:

Զորամասը դուրս յեկավ:

Այդ հեշտ յերթ չեր: Հեռավոր արեկելյան դիշեր, անձրեկից վողողված ճանապարհներ, ամենախիստ քողարկում, զգացատություն եր հարկավոր: Թվում եր, թե յուրաքանչյուր բըրի, յուրաքանչյուր պառոյտի հետեւում թագնված եր նենդ թշնամին... Առավոտյան դեմ հանդստի սարքեցին: Մինչև Խասան լիճը մնում եր մոտ քսան կիլոմետր:

— Ե, սիրելիներս, կովելո՞ւ յենք.— Կոմիսարը մոտենում է հագնած մարտիկներին, կատակում, խորհուրդ-

ներ և տալիս և ստուգում և հանդերձանքը:— Պետք ենութեանք, —ասում ենա իր հավասար, վոչ բարձր ձայնով:

Կոմիսարը ժողովեց բոլոր հրամանատարներին, քաղաքեկներին և հանդիստ կերպով, կարծես դասերի ժամանակ լիներ, նորից բացատրեց նրանց անելիքը: Նա, առանց շտապելու, սկսեց վերլուծել դիշերային յերթի թերությունները, մատնացույց արեց լավագույն մարտիկներին, համաձայնության յեկավ «ԽՍՀի չովկա» արշավանքային պատիթերթերի հրատարակման հարցում: Ենտո զորամասի հրամանատար Լասկինի հետ դուրս յեկավ շրջադիտության:

Շատ շուտ վերադարձան... Ստորաբաժնումներից մեկը քաղցեկ Պանկրատովի հետ միասին մեկնում և Զարիեչյայի ուղղությամբ: Յեվ յերբ յերիտասարդ մարտիկները կովի մեջ են մանում, ու առաջն անդամ լսում են իրենց գլխների վրայով թռչող գնդակների սուլոցը և թնդանոթների պայթյունների վորոտը, Պոժարսկին Պանկրատովին տոմս և գրում, — ընկերներն ինչպես են զգում իրենց:

Քաղցեկի պատասխանը նրան հանդստացնում է: «Մարտիկներն իրենց շատ լավ են պահում, նյութականը կանոնավոր վիճակում է, տրամադրությունը լավ է», — զեկուցում է Պանկրատովը:

— Այլ կերպ չի ել կարող լինել, — ժպտում է կոմիսարը, ինամքով պահելով այս հաղորդումը դաշտային պայուսակում:

Մոտենում եյին վճռական մարտերը: Ոգտվելով ըոպեյական լոռությունից, կոմիսարը կուսակցական ժողով է կազմում: Նա կոմունիստներին կոչ է անում առաջն շարքերում լինել, խսում է այն պատասխանատվության մասին, վորն ընկնում է նրանց վրա:

— Յուրաքանչյուր կաղացող ձիու համար, յուրաքանչյուր դույշային կորուստի համար, յուրաքանչյուր կուստի համար ամենից առաջ քաղաշխատողներից, կոմունիստներից ենք պահանջելու:

Հենց այս ժողովում ել մի շաբթ լավագույն ընկերներ ընդունվեցին կունակցության մեջ: — Կոփկ գնալով, նրանք ուզում եյին կոմունիստներ լինել:

Յեվ փակելով այս յուրատեսակ ժողովը, վոր յերբեմն ընդհատվում եր պայթող արկերի աղմուկով, Պոժարսկին մեկ անդամ ել է հիշեցնում:

— Մեր զորամասում վոչ մի վախկոտ. վոչ մի խուճապարկու չպետք է լինի: Արկերից չվախենալ: Կոմունիստների կողմից ամենափոքրիկ վախկոտությունն ու խուճապարկումը կդնահատավեն վորպես գալաճանում կուսակցական պարտքին: Այս պետք է ամուր հիշել:

Յելույթից առաջ հանդիսաւ: Բայց կոմիսարը չէ քրնում: Ահա նստել է կոճղի վրա և դաշտային պայուսակը տակը գրած, իր հուշատերում ինչ-վոր նշումներ ե անում: «...Հենց նոր մե խումբ ընկերների կուսակցության մեջ ընդունեցին... Բոլորն ել ինչ հրաշալի մարդիկ են, առյուծների պես կկուլեն»— գրում է նա:

Կոմիսարը վեր կացավ, ձգեց, գլուխը թափահարեց, քունը փախցրեց և գանդաղ կերպով ուղղվեց դեպի մի խումբ մարտիկների, վոր աշխույժ կերպով զրուցում եյին ինչ-վոր բանի մասին:

—... Իսկ Ալյոշա Պոպովիչն ասում է ոճին. «Մեկ անգամ ասում է, կովը մտավ հորս բակը, յես պոչից բռնած շպրտեցի նրան կտորից »— լսում է Պոժարսկին պատմողի հետզետե խլացող ձայնը և նշանակում է իր համար, «Եհ,

քանի վոր բանը հեքիաթներին հասալ, ուրեմն տղերը
ընտելացել են:

— Եերեկ կովը ճապոնական և յեղել, — բարեկլով
հարցնում ե կոմիսարը:

— Վոչ, ընկեր կոմիսար, — պատասխանում ե յերիտա-
սարդ կարմիր բանակայինը, վորի բաց գույն մազերը
խրոխտորեն ցցվել ելին դժին, — ճապոնացիները կով չու-
նեն: Տղաները պատմում եյին, վոր հենց վոր ճապոնացի-
ները գրավեցին իրենց իսկ գյուղը, նույնիսկ բոլոր չներին
խեղդուել ու նրանց մորթին քերթել են... — նրանց կով
ո՞վ ե տվել վոր:

— Այս, դժվար են աղբում ճապոնական դյուլացին,
ճապոնական բանվորը — նրանք ուտելու բան չունեն, — հա-
մաձայնում ե կոմիսարը:

— Դժվար կլինի, քանի վոր նրանք գենեվալներ ունեն.
կարծես խելքները կորցրել են, ուզեցին խորհրդային սոպ-
կան գրավել, — խոսակցության մեջ ե մտնում մեկ կար-
միր բանակային, վորի դեմքը թաղնված ե մթնում:

— Դուք ինչո՞ւ չեք քնում, — հարցնում ե կոմիսարը, —
վաղը դժվար ոք ե, հանգստանալ ե պետք...

Դեռ յերկար ժամանակ շրջում ե նա քնած, նիրհող,
խաղաղ զրուցող մարտիկների շրջանում: Նա չի մտածում,
վոր գուցե այս նրա վերջին գիշերն ե, վոր վաղը կոփվ ե
լինելու: Յեկ ինչո՞ւ ել մտածեր: Այդ հարցը կոմիսարը
վաղուց ե վճռել. և նա մեղմ կերպով սկսում ե «Կարմե-
նից» մի արիա սուրել:

Լուսադեմին զորամասը դուրս յեկալ վերջին յերթի:

... Այս բոլոր որերին քաղղեկի տեղակալ Յակովեկը
բացակայում եր: Նրան դասընթացների յեն գործուղել:

Յուրայիններին նա վճռուում եր արդեն կեսորին, դադարի
տեղում, իսկ կոմիսարին տեսել ե փոքրիկ լճում լողանա-
լիս:

— Ա՛, Յակովեկ, բարե, — ջրի միջից վողջունեց նրան
Պոժարսկին, — յեկա՞ր մտիր ինձ մոտ, ջուրը շատ լավ է
թարմացնում...

— Հենց նոր եմ լողացել, այստեղ, պառոյտի յետե-
վում:

— Դե, ինչպես դիտես, — և Պոժարսկին մեկ վոտի վրա
թռչելով և մկանոտ արեառ մարմնից զմբուխտի պես հոսղ
կաթիները թափ տալով սկսում ե հաղնվել: Բայց լավ ես
մտածել, յեղբայր, վոր յեկել ես կովելու: Ուրեմն միա-
սին կդնանք կովելու:

— Ելի նույնն ե, — վճռում ե ինքն իրեն Յակովեկը, —
միայն մի քիչ նիշարել, այրվել ե:

— Դու իրադրության հետ ծանո՞թ ես, — թաց մազե-
րը սանրելով, հարցնում ե Պոժարսկին, և, պատասխանի
չսպասելով, բացատլում ե Յակովեկին.

— Յեղիմյաննայա և Զաղերնայա բարձունքները զավ-
թելով, ճապոնացիներն սկսեցին նրանց ամրացնել: Նրանք
խրամատներ փորեցին, չերտափակեր (Յլինդայ) կառուցե-
ցին, բետոնած զնդացրային բներ շինեցին, լարափակոցներ
դրին, մեկ խոսքով՝ սարքվեցին, ինչպես իրենց տանը:
Աչա թե ինչ ստացվեց: — Պոժարսկին ճիպոտով սկսեց
դետնի վրա գծել — առջեռում լիճ, կողքերում զնդացիրներ:
Հրամանատարությունը թույլ չի տալիս նրանց տերիտո-
րիան մտնել: Լուրջ դրություն ե, 'չե՞':

— Այս, — համաձայնում ե Յակովեկը, — իսկ մեր կոնկ-
րետ անելիքն ի՞նչ ե:

— Կոնկը անելի՞քը, յեղբայր, — սովորեցնել հարդել խորհրդային սահմանները, նրանց ակնբախ դաս տալ, քանի վեր նրանք ուրիշ լեզու չեն հասկանում, բացատրել, վոր մեր յերկիրը Չեխոսովակիա չե, Չինաստան չե, ահա մեր թնդանոթները, ահա «մի քիչ» ինքնաթիռներ, ահա տանկեր... ճակատներդ ջարդեցի՞ք... Այժմ նստեցեք ու քացի չոտաք:

— Իսկ ավելի կոնկը՝ ծիծագում և Յակովիկը:

Կոմիսարը քարտեզը հմտնեց.

— Այս լեռնակը տեսնո՞ւմ եք: Սա վոչ թե բարձունք ել, այլ ուղղակի դնդացրային պահեստ ե: Ճապոնացիք այնտեղ մոտ 40 դնդացիք են քաշ տվել: Մենք նրան այլպես ել անվանում ենք Պուլեմյոտնայա: Մեր վաշտը հրաման ունի — պաշտպանել միացման ձախ թեր, հսկել ճապոնացիներին, վոր նրանք չկարողանան անցնել ահա այս դետը և շրջանցել մեր ձախ թեր, — կոմիսարը մատով բղեց քարտեզին, վորտեղ վոլորփում եր Տումեն-Ռուս դետը: Այս գիշեր կորավենք մատնանշված սահմանադիմը: Պա՞րզ ե:

Յակովիկը շուտ հասկացավ իրադրությունը և արդեն կես ժամից հետո իր ստորաբաժանումումն եր:

... Գիշերը, հրաշալի կերպով քողարկված, ստացած շուցումները պահպանելով, մարտիկնեցը տասներկու կելումետրի չափ առաջ զնացին ե, մատնանշած սահմանադիմը դրավելով, խրամատներում ամրացնա:

Յերկրորդ գիշերն ե, Պոժարսկին չի քնում: Նա խրամատից խրամատ է սովում, խոսում է քաղղեկների, մարտիկների հետ, հետեւում է տեսնելու, թե լա՞վ են սարք-

վել նրանք նոր տեղում, ստուգում և քողարկումը, թաղնը վելու տեղերը:

Տաղնապալի դրություն ե: Թշնամին բոլորովին մռատ ե: Ամեն բոսկ կարող է ընդհարում սկսվել: Խրամատներից մեկում կոմիսարը Յակովիկին է տեսնում.

— Ե, վերջապես, վաղը մեղ մարտի կթողեն, — առանձնապես փաղաքչական ձեռվ ասում ե նա: Այդ նրանց վերջին խոսակցությունն եր:

Լուսանում ե: Առավոտվա մառախուղում ինչ-վոր ֆիդուրներ են յերկում, վայրենի «բանդայ» աղաղակ է լըսվում, հետո լուսթյուն և բոլորովին մոտիկում հզոր կարմիր բանակայինական «ուռա՛»:

Այբողջ գիշեր չլուս թնդանոթային կրակոցը, վորին արդեն ընտելացել ելին, ուժեղացավ: Լսվում է մոտորների թնդյունը: Սլացան պողպատե կարմրաստղ թռչունները: Մոտիկ տեղամասի վրա կրիվ ե:

Խասան լճի հենց ափին տեղի ունեցող պայթյունների դղրդյունների մեջ հանկարծ գնդացիրներ ճայթեցին, հրացանների անկանոն տրաքցներ լսվեցին:

Կոմիսարն անհանդիստ կերպով զանդահարում է հեռախոսով.

— Դուք մեզ չե՞ք մոռացել, — զոսում ե նա հեռախոսի փողակում: բայց միենույն հանդիստ պատասխանն է լսում:

— Յերբ հարկավոր լինեք, ձեզ կասեն, իսկ այժմ ձեր դործին կացեք, թշնամուն պահեցեք թեից:

— Նրան պահելու հարկ չկա, նա այստեղ չի ել խցկը վում, — մռայլ կիրպով վնթինթում և Պոժարսկին:

— Ի՞նչ կովողներ են, — հայհոյում ե մեկ մարտիկ,

չփելով կնդացիրի սառը փողը, — զոնե մեկը դար մեղ վրա:

— Իսկ գու խորհուրդ տռւր, վոր գեաը լողալով անցնեն, — ծիծաղում ե մեկ ուրիշը, — հետաքրքրական ե տեսնել, թե ինչպես ե աշխատում նրանց «Ոսվողը»:

Տասնչորս րոպեյի ուշացումով, կոմիսարն այդ իսկույն նշանակեց, նախաճաշ տվին, հետո հերթապահները խրամատները թեյ տարան: Հարեւանների հրաձդությունը դադարեց:

— Յերեկի ճապոնացիները ուռուցքներն են հաշվում, իսկ տղաները դեռ թեյ են խմում, — ծիծաղում ե մեկը:

Յեկ հանկարծ հրաման — լեյտենանտ Զետվերտնիխի ստորաբաժանումը թող գրավի Զառղերնայայի բարձունքի հարավային լանջը: Մնացած ստորաբաժանումներն սկսում են շարժվել Խասան լճի ափի յերկարությամբ: Յերբեմն հատուկենտ կրակոցներն են միայն կտրում նրանց ճանապարհը: Լեռնագող: Ողտվելով ծածկույթից, մարտիկները կուտակվում են այնտեղ: Զորամասը գտնվում ե յերկորդ դժի վրա:

Կարծ տասնրոպեյական միտինդ ե սոպկայի հակառիք լանջում, մեկ խիտ թփուտում: Վերջին միտինդ, վոր կաղմել եր Պոժարսկին... Ժայռերը ծածկում են հակառակորդի կրակից: Հոետորները խոսում են կիսաճայն: Առջեռում որպատես խուզարկուներն են:

— Կուսակցության և կառավարության գծով առաջադրանքը պետք ե կատարվի... Կկատարենք արդյոք, — հարցնում ե կոմիսարը:

Վորպես պատասխան հնչում ե խուլ՝

— Կկատարենք:

Հենց այլտեղ ել սոցիալիստական մրցման պայմանագրեր են կնքվում, վորոնք ընդամենը յերկու կետ ունեյին.

1) Կարմիր դրոշն առաջինը տնկենք Զառղերնայա սովորայի վրա.

2) Պահպանենք մեղ և տեխնիկան:

Այս անմոռանալի միտինդի մասին կոմիսարը դրանցիւ եր.

«Հանդես ե գալիս ընկեր Յակովլես: Նրա յուրաքանչյուր խոսքը կարմիր Բանակի բոլոր մարտիկների խոսքն է: Ինչ ատելությամբ ե խոսում թալանչների մասին: Հետո նա խոսում ե սամուրայներին ավելի վոչնչացնելու համար պայմանագիր կնքելու մասին: Խնդրում ե ինձ հաստատել այդ պայմանագիրը: Սմիրնովը հայտարարեց. «Թող ճապոնացիները փորձեն մեր գնդակները, կտեսնեն, թե ինչ անհամ են նրանք... Այս, ցույց կտանք կարմիր Բանակի ամբողջ ույժն ու զգորությունը»:

Սկսվում եր Պուլեմյոտնայի դրոհը...

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՍՏԱԼԻՆԻ Հ ԱՄԱՐ,

— Բանջարանոցները ժողովելու ժամանակն ե... Յեկինչպես ե, վոր մինչև այժմ չեմ մտածել Ոլյային դրել: Հենց այսոր մեկ մեծ նամակ կգրեմ: Կասեմ, վոր պատրաստվի դիմավորելու... թող տոնական ճաշի մասին մտածեն:

Պոժարսկին ման ե գալիս իր տրորած կածանով: Զորու կես քայլ առաջքար ե, յերեք դեպի ձախ ու յետ:

Արկի ծակող սուլոցը կոմիսարին հարկադրեց ակամա ուսերը բարձրացնել, կարծես անձրես տակ լիներ:

Ո՞ւիս — մոտիկում վորոտում ե պայմանը:

— ձապոնացիներին հավաքում ե, — շարունակում ե ինքն իր հետ խոսել կոմիսարը, — ինչպես ե այդ բանը յերդվում «Իվան Սուսանինում» — վախից չեմ սարսափում...

Անպատճելի կերպով յերևաց քաղաքաժնի պետը: Իրարարեցին:

— Դե, ընկեր պետ, — հայտնում ե նրան կոմիսարը, — վերջապես, մենք ել մարտական առաջադրանք ստացանք...

Ասացեք, մեր զորամասը վոչ վոք չի՝ գնում: Յեթե առիթ լինի, թող կոչու հայտնեն, վոր այսոր նրան գրելու յեմ:

... Մարտիկները մատնանշած սահմանադիմ դրավում են: Յերկու վաշտ ձախ թեկից ըրջանցում են ձապոնացիներին:

Գնդացիների ճարճատյունն ուժեղանում է: Խորհըրդային «Մաքսիմը» և ճապոնական «Գուչիսը» կարծես իրենց ուժերով մրցակցում են իրար հետ: Զարադուչակ սուլոցով անընդհատ թռչում են արկերը: Հրետանային մենամարտ ե կատարվում: Խորհրդային նշանառուները դիմուկ նշան են առնում: — Ճապոնական թնդանոթները լուսում են մեկը մյուռ սի յետեից:

Հենց վոր լնդհատվեց ճապոնացիների հերթական գրոհը և լուսություն տիրեց, կոմիսարը նորից ե զրուցում մարտիկների հետ: Նա ցույց ե տալիս, թե կովի մեջ նրանցից ով ինչ վրիպում ե դործել, հենց այսուեղ ել անձնագույնության ու հերոսական որինակներ ե մեջ բերում:

Վաղուց եյին մարտիկների ըրջանում տարածվել դնդա-

յրորդ Տարատորինի քաջադրծությունների և սահմանադրը ծայլին ջոկատի անահ լեյտենանտ Խրիստոլյուքովի մասին յեղած լուրերը:

— Պրոֆեսոր Ախուտինը, — ասում ե կոմիսարը, — Խրիստոլյուքովի անդամահատման ժամանակ 40 վերք ե թվել... 40 վերք, իսկ նա շարունակել ե կովել: Այս պետք ե հասկանալ:

Կարմիր բանակայինից կարմիր բանակայինի, խրամատից խրամատ ե հաղորդվում յերեք անվեհներ հերոսների՝ կորնեյեվի, Պուշկարյովի և Կուկոնիկովի մասին յեղած պատմությունը, վորոնք համարձակ կերպով առաջ են նետվել՝ կրակով վոչնչացնելով թշնամուն — ճղմելով նրան լըրեց մեքենայի թրթուրաշղթաներով: Վառելանյութը վերջացավ: Տանկը, բավական հեռու գնալով, կանդ ե առնում: Ճապոնացիները ըրջապատեցին նրան: Մտածում են սովամահությամբ վերցնել: Զոռախուժում եյին, դռուդոռում, սպառնում եյին: Վերջապես, վճռեցին այրել մեքենան: Բենզին են լցնում վրան, խոտ ու գերաններով ել պատում են: Բայց խորհրդային մարդկանց հրամանատարությունը չփեց իր ռազմական մեքենան: Հայրենիքի յերեք հարազատ զավակները ռազմական դիրքում այրվելուց առաջ չարդում են ճապոնացիներին:

— Սրանք հո հերոսներ են, հերոսներ վողջ Խորհըրդային Միության: — ասում ե Պատարսկին, — մեռնել, բայց անձնատուր չլինել...

Անվեհեր քաջադրծություններ միայն յերկրի վրա չե, վոր կատարվում են: Բերնից բերան են անցնում ողաչուների մասին պատմություններ, այն մասին, թե նրանք ինչպես են մեկը մյուսի յետեից վոչնչացրել ճապոնական

մարտկոցները, ինչպես են թշնամուն ջարդ ու փշուր արել
ու էից:

...Խորհրդային հրետանու խափանիչ կրակը ճապոնա-
ցիներին վոչ յերկար ժամանակով սեղմել և գետնին: Նը-
րանք ևս հասկանում եյին, վոր հասել են վճռական ժա-
մերը, վորոնցից ամբողջ ավանտյուրայի յելքն և կախված:

Կարճատեղ դադար... Յերեսուն րոպէ ել չեր անցել,
յերբ մարտիկները նորից առաջ շարժվեցին:

— Բնկեր Ստալինի համար, Սահմանադրության հա-
մար, — հրաման և տալիս կոմիսարը:

Մարտիկները դուրս են թռչում թափսառցից, վորտեղ
միտինդն եր, վերջին միտինդը կոմիսար Պոժարսկու մաս-
նակցությամբ:

«Դեպի 1600—Զառովերնայա բարձրությունը, հարավա-
յին լանջը գրավել», — վոտի վրա իր վերջին դրանցումն
և կատարում Պոժարսկին:

Յեվ թեև պատերազմի ժամանակ դժվար և խնդիրն
ամեն մեկին հասցնել, — այս հրամանն ամեն մեկի գլուխակ-
ցությանը, սրտին հասալ: «Ուռա՛» բացականչելով, ըն-
կեր Ստալինի անունով, Պոժարսկին միացման դլուխն ան-
ցած, դուրս թռավ թափսառցից... Զորամասն անմիջական
շփման մեջ մտավ թշնամու հետ:

Զնայած անքուն դիշերներին, կոմիսարն առջելումն և:
ինչպես միշտ, խրախուսում և ընկերներին, քաջալերում
և նրանց, ովքեր, նրա կարծիքով, կարող եյին յերերալ,
նշում և գովում և ավելի տոկուններին...

Կարծես զնդացրային և հրետանային կրակն ամենա-
բարձր լարվածության հասավ: Պայթյուններից ցնցվում ե

յերկիրը, անտանելի կերպով այրում ե արել, այրվում ե
խոտը, բարկ կերպով ծուխ ու փոշի յե փովում:

— Այո՛, — մտածում ե կոմիսարը, — այսպիսի փոթո-
կուն կրակ հազիվ թե իմպերիալիստական պատերազմի ժա-
մանակ յեղած լինի: — Նա թեթև կերպով վիրավորված
ե: — Այդպես, դատարկ բան ե, չանկուել ե, — վրա համոզ
ընկերներին բացատրում ե Պոժարսկին:

Մարտիկները պառկեցին և հանկարծ դեպի լոկիրչ թա-
լանչիներն ունեցած ատելության միահամուռ թափով ըն-
կան շփոթված ճապոնացիների վրա: Նոնակը գլխից բարձր
լունած, կոմիսարը գոչեց.

— Առա՛ջ, հանուն Ստալինի, հանուն հայրենիքի:

Մարտիկներն արձագանքեցին իրենց կոմիսարի կոչին:
Ճապոնացիները կրակն ուժեղացրին: Բայց նրանց կրակոցն
արդեն անկանոն եր, չփոթված վիճակում՝ գրոհի մեջ ըե-
ալում առաջացավ: Աստիճանաբար լուսւ եյին «Գոչիսնե-
րը»: Դիպուկ ձեռքով գցված նոնակներ եյին պատովում
թշնամու իրամատներում:

«Պոչից բռնած շպրտեցի նբան կտուրից, — Պոժար-
սկին հիշեց անցած գիշերը լսած հեքիաթը: Վո՞րտեղ ե այդ
յերիտասարդը, կենդանի՞ յե արդյոք անցավ մտքովը:

— Առա՛ջ, — գոչեց կոմիսարը: Բայց անսպասելի կեր-
պով լուեց և մեղավորի պես ժամաց: Զգաց, վոր վուսն
այրվում ե: Պոժարսկին նստեց, սակայն մեկ վայրկյանից
հետո ուղղվեց և նետեց հերթական նոնակը:

— Դուք վիրավորված եք, ընկեր կոմիսար, — հարց-
րեց նրան մոտ վազող կարմիր բանակայինը, — Թույլ տվեք
ձեզ ոդնեմ:

— Վոչինչ, վոչինչ: Խփեցեք թշնամուն... — պատաս-

խանում և Պոժարսկին և, շտապ կերպով վերքը փաթաթելով, նորից կաղալով առաջ են նետվում:

Նրա աչքերը փայլում են, շրթունքները սեղմված են, քամին ցրել են մագերը:

Վաշտն արդեն յերկու անդամ եր գրոհի գնում, բայց չեր կարողանում ճապոնացիներին դուրս քշել վերջին ամրացրած կետից: Միքանի «Գոչիկիսներ» դեռ շարունակում են կրծոտվել՝ գնդակներ ցրելով խորհրդային հողը:

Հողնած մարտիկները պառկունեցին: Խմել են ուղում: Բերանները չորացել են: Դժվար են չնչում: Ցավոտ կերպով մղկում են ձեռքերը, վոտքերը, բայց չի կարելի հանդատանալ, պետք ե թշնամուն ջարդել, վերջացնել:

Խոր փոս ե: Ոգտվելով այս բնական ծածկույթից, այնտեղ են սողում կովից տանջված կարմիր բանակայինները:

Պոժարսկին ու զորամասի հրամանատար Լասկինն առաջ են անցնում, վորպեսզի թշնամու դասավորման հետ ծանոթանան: Խոսում են ցածր ձայնով:

Պոժարսկին տեղից բարձրացավ: Այդ ժամանակ խրամատից, վոր լքած եր թվում, դուրս ե թոշում ճապոնական մեկ սպա: Վայրենաբար «բանզայ» ճչալով, նա նոնակ ե վրա բերում:

Պոժարսկին դիպուկ կրակոցով նրան տեղն ու տեղն ե դլորում: Նոնակը վայր ե ընկնում սպայի ձեռքից: Նա պատռվում ե հենց այստեղ, ճապոնական խրամատում: Պայթյունը կարծես ազդանշան ե դառնում: Խրամատներից, քարերի յետելից ճապոնացիների վայրենի, դաշտած դեմքեր են յերեսում:

Պոժարսկին իր ամբողջ եյությամբ, կարծես ինչ-վոր

վեցերորդ զեայարանով հասկացավ, վոր հարվածի համար վճռական վայրկյան ե հասել.

— Առաջ, հանուն Ստալինի, — կոչ ե անում նա մարտիկներին և նետվում ե ճապոնացիների վրա առաջինը: Կարմիր բանակայինները վեր են թոշում և սվյանները հորիզոնակի բռնած, անզուսպ կերպով նետվում են առաջ իրենց կոմիսարի հետեւից:

Սկսվեց Պուլեմյունայա սոպկայի յերրորդ և վերջին դրոհը: Հաղթական կերպով են չնչում խորհրդային «Մաքսիմները» փոթորկուն կրակով հնձելով ճապոնացիներին:

Կարմիր բանակայինները միայն խորհրդային մարդկանց հատուկ խիզախությամբ նետվում են թշնամու վրա: Զեռնամարտ ե տեղի ունենում: Գնդացիբները լուսում են:

Թշնամին յերեաց: Խուճապով բռնված, վիրավոր-ներին ու զենքերը ձգելով, փախավ...

Քրանած դեմքը սրբելով, կոմիսարը դոչում ե.

— Մինչև վերջը վոչնչացնել թշնամուն, — և վազում ե փախչող ճապոնացիների հետեւից:

— Պառկիր, Պոժարսկի, պառկիր — հիշեցնում ե նրան Լասկինը: Բայց կոմիսարը նոնակը ձեռքն առած, այն ամբողջ թափով նետում ե ճապոնացիների հետեւից:

— Ավելի հեռու թուիր, — ասում ու հանկարծ ցնցվում ե նա:

Մարտիկները տեսնում են, թե կոմիսարն ինչպես տարրորինակ կերպով ձեռքերը թափահարում, անձարարիկ կերպով գանդաղաքայլ մի կողմ ե գնում, մի վայրկյան կանգնում ե անշարժ և դանդաղ կերպով ընկնում ե յերեան ի վեր:

— Սողուններն սպանեցին կոմիսարին, — արտասուրքը

պատելով կարմիր բանակային կողոմցւը հայտնում և Յա-
կովէին:

Մարտիկները շրջապատեցին Պոժարսկուն: Միքանի
ակնթարթ նա պայքարում և մահվան դեմ: Գլուխը բարձր
բռնած և ձեռքով ցույց տալով փախչող ճապոնացիներին,
նա համարյա շշնջում ե.

— Ամբացնել հաջողությունը... հանուն Ստալինի...
Հանուն յերջանիկ Հայրենիքի...

Գլուխն ընկավ ընկերների թևերի վրա: Հետո քիչ
բարձրանալով, կոմիսարը շշնջաց.

— Հայտնեցեք... պառավին...

Աչքերը փակվեցին... մահացու գունատությունը ծած-
կեց դեմքը: Միայն ժպիտը մնաց նախկինը, վոր այնքան
մոտիկ եր ու ծանոթ բոլոր մարտիկներին:

Կոմիսար Պոժարսկին այլևս չկար:

Վոչ մի զավթող չափատվեց: Թաշխտական բանդան
գլխովին վոչնչացավ, Պուլեմյոտնայա սոսկան վերցվեց:

Քաղղեկներից մեկը կարմիր դրոշ պարզեց Խորհրդային
Միության Հերոս կոմիսար Պոժարսկու անկման տեղում:

— Մենք կփոչնչացնենք Փաշխտական սրիկաներին,
ընկեր կոմիսար, — գոչեց նա:

Յեղ կարծես վորպես պատասխան մեկ այդպիսի կար-
միր դրոշ ել Զառպերնայա սոսկայի վրա բարձրացավ:

Յերկնքում բարձր հնչեց խորհրդային ինքնաթիւների
դպրունը, վոր ձայնակցում եր խորհրդային տանկերի
դպրունին:

... Փայլատակում ե Խասան լիճը,

Մեր դրոշը Զառպերնայայի վրա յե ծածանում.

Մեր սրտերում ել, կոմիսար,

Քո կենդանի սիրտն ե բարբախում:

Այսպես և յերպվում կոմիսար Պոժարսկու մասին
Հյուսված յերպում:

Փառապանծ կոմիսար Պոժարսկու անկման տիսուր
լուրն արագ կերպով տարածվեց ամբողջ յերկուում: Վոչ
միայն այն զորամասում, վորտեղ Պոժարսկին եղ ծառա-
յում, այլև շատ ուրիշ զորամասերում, յերեկույթներ ու
միտինգներ կազմվեցին՝ նվիրված հերոս կոմիսարի հիշա-
տակին:

— Լավ կոմիսար եր: Իրոք մարտիկների ու հրամա-
նատարների հոգին եր: Ինչ հարցով ասես դիմում եյին
նրան, և նա պարզ կերպով բացատրում եր այդ հարցը: Դա
մեր հայրն եր, — այսպես ե հիշում իր ընկած կոմիսարի
մասին մեքենայի հրամանատար մարտիկ Մանգենկոն:

Այն զորամասում, վորտեղ Պոժարսկին կոմիսար եր,
Միության բոլոր անկյուններից կարեկցական նամակներ
են տեղում: Գրում են մարտիկները, կոմիսարինախկին սա-
ները, կոլխոզնիկներ, թժշկներ, ուսուցիչներ, բանվորներ:

«Ընկերներ, կարգացի լրացրում «Զինկոմ Պոժարսկու
կյանքն ու մահը» հողվածը... Միրտս ցավելու չափ ճմլից
կրծքիս տակ... Յես հիշում եմ նրան և տեսնում եմ նրա
դեմքն առջես—խիստ, մի վոքք կկոցած աչքերով, բայց
բարի և զգայուն... Ընկերներ, զդացմունքներս արտահայ-
տելու համար բառերս պակասում են... Բայց թող հիշեն
դարչ ստորայները, թող հիշեն այդ սողացող նողկալի-
ները, վոր մեր ընկեր Պոժարսկու և ուրիշ շատ ընկերների
կյանքի համար, մեր հերոսների արյան յուրաքանչյուր

կաթիլի համար նրանք իրենց Հոտած ամսուրայական առյան դետեր կհոսեցնեն...

Ընկերներ, ինչպես կուղեցի տեսնվել ձեզ հետ, հարցու-
փորձ անել կոմիսարի անկման մասին... խոսք եմ տալիս
ձեզ, վոր, յեթե մեր կառավարությունը, լենինի—Ստալինի
կուսակցությունը պահանջեն, յես իմ արյունը կաթիլ առ
կաթիլ կտամ բանվոր դասակարգի գործի, Խորհուրդների
Յերկրի, բոլշևիկյան կուսակցության, համաշխարհային
պրոլետարիատի առաջնորդ ընկեր Ստալինի համար:

Կեցցե ամբողջ աշխարհի միասնական ճակատը պատե,
բազմի և ֆաշիզմի դեմ:

Ձեր ընկեր կրտսեր հրամանատար Խարչենկո»:

Յեվ այսպիսի նամակները հարյուրներով են:

Իմանալով վորդու մահը, Ի Հատուկ կարմրագրու
բանակի մարտիկներին ու հրամանատարներին հերոսի մայր
Աննա Ֆոմինիչնա Պոժարսկայան ել և նամակ ուղարկել:
Նա գլում ե.

«Մեր սրբազն յերկրի վրա յեկած ճապոնական
բանդիտների հետ ունեցած կռվում ընկալ իմ ջերմ սիրած
վորդի իվան Ալեքսեյեվիչ Պոժարսկին: Նա կոմիսար եր:
Նա վորպես իսկական բոլշևիկ առաջնորդ մարտի մեջ մտավ
հանուն մեր ժողովրդի յերջանկության, հանուն Ստալինի:

Իմ վորդին ընկավ թշնամու դնդակից, բայց ճապոնա-
ցիներին չհաջողվեց կոտրել նրանց, ում կոմիսարը կռվի
յեր տանում: Հեռավոր արևելյան հերոսները ճապոնացի-
ներին ջարդեցին և արտաքսեցին խորհրդային յերկրից:

Ընկերները լավ եյին կռվում: Պատվով կանգնեցին
ինքը բարեյին յերկրի համար: Սրա համար յես մայրական

ջերմ չնորհակալություն եմ ուղարկում ձեզ: Միշտ յեղեք
այնպես ամուր ու տոկում, ինչպես իմ վորդին: Աչալուրջ
կերպով պահպանեցեք հայրենիքը, վոր դաստիարակել ու
կերակրել ե ձեզ:

Յես յերկու վորդի ել ունեմ.—Յեռդոր և Պյոտր: Յես
նրանց այնպես եմ դաստիարակում, ինչպես մեծ վորդիս եր:
Թող նրանք մեծանան, յես նրանց կուղարկեմ իվանի փո-
խարեն: Հաղարակոր հեռավորարկեցի մաքտիկների հետ
միասին նրանք չեն խնայի իրենց կյանքը հայրենիքի հա-
մար, վորի ազնիվ դավակը իմ վորդի իվանն եր»:



Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ն

Քանվեցից մեկը	5
Կյանք մտնելը	10
Կոժիսարն աշխատելիս	15
Հին բարեկամների մեջ	20
Տաղնապով	41
Հայրենիքի համար, Թառինի համար	31

Թարգմ.՝ Հ. Սահիկյան
Պատ. խմբագիր՝ Հ. Պարոնյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Ա. Արգաֆանյան
Կանոնական սրբագրիչ՝ Ա. Շահբագյան

Գլուխիտի լիազոր՝ Ե-1158. Հրատ. 4978
Պատվեր 623. Տիրաժ 5000.
Բուզբ 72×110. Տպագր. 2 մամ.
Մեկ մամ. 58·320 նշան.
Հանձնված և արտադրության 9 հունիսի 1989 թ.
Ստորագրված և տպագրության համար 10 սեպտ. 1989 թ.
Պետհրատի 1 տպարան, Ծերեկան, Լենինի 05

«Ազգային գրադարան



NL0218602

ԳԻՆԸ 70 ԿՈՎ.

40. 610

Э. ИСАКОВ
К о м и с с а р
Иван Пожарский

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.